vhs
DVV International

Education for Everyone. Worldwide.
Lifelong.

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

2020–2021

DIE German Institute for Adult Education
Leibniz Centre for Lifelong Learning

CRRC Armenia

Մեծահասակների կրթության հետազոտություն • Adult Education Survey Armenia

© 2021 Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը Գերմանիայի
ժողովրդական բարձրագույն դպրոցների միության
(Deutscher Volkshochschul-Verband e.V. (DVV))
միջազգային համագործակցության ինստիտուտն է:

Հրատարակող՝
Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակ
Չարենց 55Ա
0025 Երևան
Հայաստան

www.dvv-international.am
www.dvv-international.de

Խմբագիրներ՝
Մայա Ավրամովսկա, Եսթեր Հակոբյան,
Էլիզաբեթ Ռեյհարդտ, Սառա Ուիդանի

Աշխատանքային թիմ՝
Էմիր Ավդագիչ, Ռամադան Ալիյա, Մայա Ավրամովսկա,
Նանա Չաբուկիանի, Եսթեր Հակոբյան, Էլիզաբեթ Ռեյհարդտ,
Բիլյանա Մոյսովսկա Մանոյլովա, Լալի Սանտելաձե, Սառա Ուիդանի

Ծրագրի գործընկեր՝
Մեծահասակների կրթության գերմանական ինստիտուտ
Լայպցիգի ցկյանս ուսուցման կենտրոն
Հայնեմանշտրասե 12-14
53175 Բոնն
Գերմանիա
www.die-bonn.de

Հետազոտությունն իրականացրել է՝
ՀՌԿԿ-Հայաստան
Ալեք Մանուկյան փող.
Գրադարանի շենք, 6-րդ հարկ, 602 սենյակ,
0025 Երևան
Հայաստան
www.crrc.am

Շապիկի նկարներ՝ Getty Images/Ali Kahfi; Getty Images/gremlin
Գրաֆիկ դիզայներ՝ Նատիա Մզեքալաշվիլի
Տպագրություն՝ Լիմուշ ՍՊԸ
ISBN: 978-9939-1-1449-1

Աջակից՝ Federal Ministry for Economic Cooperation and Development

Բովանդակություն

Ներածական խոսք 2
Հապավումների ցանկ 6
Գործադիր ամփոփում 7
Ներածություն 10
Մեթոդաբանություն
Տվյալների հավաքագրում 12
Տվյալների վերլուծություն 13
ISCED/ԿԴՄՄ Կրթության դասակարգման միջազգային ստանդարտ 13
Հիմնական արդյունքներ
Հարցվողների հիմնական բնութագրերը 14
Ժողովրդագրական տվյալներ 14
Միգրացիոն տվյալներ 14
Կրթական մակարդակ 19
Զբաղվածություն 21
Գիտելիք և հմտություններ 25
Հարցվողների հիմնական բնութագրերի ամփոփում 32
Կրթական հնարավորությունների մասին տեղեկատվության և ուղղորդման հասանելիություն
Կրթական հնարավորությունների մասին տեղեկատվության և ուղղորդման հասանելիություն վերաբերյալ արդյունքների ամփոփում 35
Մասնակցությունը կրթական ծրագրերին և դասընթացներին
Ֆորմալ կրթություն 36
Կրթությանը և վերապատրաստումներին մասնակցության արդյունքների ամփոփում 43
Ոչ ֆորմալ կրթություն 43
Ոչ ֆորմալ կրթությանը մասնակցության ամփոփում 55
Ինֆորմալ ուսումնառություն 55
Ինֆորմալ ուսումնառությանը ներգրավվածության արդյունքների ամփոփում 60
Մեծահասակների կրթության ընկալումները 61
Մեծահասակների կրթության ընկալումների վերաբերյալ արդյունքների ամփոփում 71
Հեռավար ուսումնառությունը ԿՈՎԻԴ-19-ի ընթացքում 72
ԿՈՎԻԴ-19-ի ընթացքում հեռավար ուսումնառության արդյունքների ամփոփում 81
Եզրակացություններ 82

Մայա Ավրամովսկա

Տարածաշրջանային տնօրեն
Կովկաս և Հարավարևելյան Եվրոպա
Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի

Էլիզաբեթ Ռեյխարտ, PhD

Ավագ հետազոտող
DIE, Բոնն

Սառա Ուիդանի, PhD

Աջակցել է նախագծին սկզբում որպես DIE-ի Համակարգերի և Քաղաքականության բաժնի ղեկավար, իսկ այնուհետև՝ Պոտսդամի համալսարանի դասախոս:

Հարգելի՛ ընթերցող,

2019 թ. Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը և Գերմանիայի Մեծահասակների կրթության ինստիտուտը (DIE) ձեռնարկեցին բազմաբաղադրիչ տարածաշրջանային նախագիծ, որի նպատակն էր ուսումնասիրել մեծահասակների ուսումնառության ու կրթության (ՄՈՒԿ) լավագույն փորձը, ինչպես նաև մեծահասակների մասնակցությունը կրթությանը և դասընթացներին (ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառություն): Որակական ուսումնասիրությունը կատարվել է Բոսնիա և Հերցեգովինայում, Կոսովոյում, Հայաստանում և Վրաստանում, իսկ մեծահասակների կրթության հետազոտությունը՝ Կոսովոյում, Հայաստանում և Վրաստանում:

Այս նախաձեռնության նպատակն էր համապարփակ վերլուծության ենթարկել ՄՈՒԿ բնագավառը՝ տրամադրելով քաղաքականության և օրենսդրության մշակման համար օգտակար տվյալներ ինչպես ՄՈՒԿ, այնպես էլ մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒՒ), զբաղվածության, շարունակական կրթության և այլ հարակից բնագավառներում:

Որակական և քանակական հետազոտությունների իրականացումը, համապատասխան 7 (յոթ) զեկույցների պատրաստման աշխատանքները կատարվել են 2019թ. երկրորդ կեսից մինչև 2021թ. հունիս ընկած ժամանակահատվածում: Նախագիծը մեկնարկել է որակական հետազոտությամբ, որի նախնական արդյունքները ստանալուց հետո սկսվել է քանակական հետազոտության իրականացումը:

Շարունակական կրթության (Ցկյանս ուսումնառության) եվրոպական ռազմավարությունը կարևորում է առաջընթացի փաստահենք մշտադիտարկումը: Այս նախագծում ներառված երկրների (Բոսնիա և Հերցեգովինա, Կոսովո, Հայաստան և Վրաստան) համար կատարված ուսումնասիրությունները և հետազոտությունները

զգալի նշանակություն ունեն առկա իրավիճակն արձանագրելու, մեծահասակների ուսումնառության ամբողջական պատկերը տրամադրելու տեսանկյունից՝ անդրադառնալով ինչպես նախապայմաններին, այնպես էլ մարտահրավերներին:

Որպես ուղեցույց ունենալով մեծահասակների կրթության միջազգայնորեն ճանաչված հետազոտությունը՝ գործընկերները և տեղական փորձագետները վեր են հանել նաև տվյալ երկրի առանձնահատկությունները և տեղեկատվական կարիքները: Արդյունքում, հարցման ստանդարտ գործիքը հարմարեցվել է երկրի պահանջներին, ինչպես նաև ավելացվել են լրացուցիչ հարցեր մեծահասակների ուսումնառության ընկալումների և դրդապատճառների վերաբերյալ: Բացի այդ, դիտարկվել են նաև կրթական և այլ աջակցության կարիքները փոփոխությունների ընթացող մեծածավալ փոփոխութունների տեսանկյունից: Հարցեր են ավելացվել նաև ՔՈՎԻԴ-19 համավարակին արձագանքը պարզելու նպատակով, այդ թվում՝ կրթության և (թվային) ուսումնառության հասանելիության վերաբերյալ: Հարցման արդյունքները տեղեկատվություն են տրամադրում մեծահասակների ուսումնառության ծավալի և որակի մասին՝ պատասխանելով մի շարք հարցերի: Այսպես, օրինակ, դիտարկվում են մեծահասակ բնակչության տարբեր խմբերի ուսումնառությունը և դրա նկատմամբ դիրքորոշումները, առավել շատ կամ քիչ ներգրավված խմբերը, ուսուցման տարբեր տեսակների օգտակարությունը այդ խմբերի համար: Դիտարկվում է նաև սոցիալ-տնտեսական պայմանների դերը, այն է՝ զբաղվածության կարգավիճակը կամ բնակության վայրը (գյուղական կամ քաղաքային):

ՄՈՒԿ որակական ուսումնասիրությունը լրացուցիչ խորքային տեղեկատվություն է տրամադրում տվյալ երկրի կրթական համակարգի և դրանում ՄՈՒԿ կարգավիճակի վերաբերյալ: Ուսումնասիրության հիմքում ընկած է համընդհանուր մոտեցմամբ տվյալների հավաքագրումը և վերլուծությունը, որի վրա աշխատել են միջազգային և տեղական փորձագետների խմբերը: Այդ երկու զեկույցները միասին մասնակից երկրներին գերազանց հնարավորություն են տալիս գնահատելու առկա իրավիճակը կրթության քաղաքականություններով սահմանված խնդիրների տեսանկյունից, ինչպես նաև մշակելու ՄՈՒԿ համակարգի հետագա զարգացումն ապահովող ռազմավարություններ:

Քանի որ ուսումնասիրությունները կատարվել են 4 (չորս) երկրներում միասնական մեթոդաբանությամբ, դրանց համեմատության արդյունքում հնարավոր է դառնում որոշակիորեն դասակարգել տվյալ երկրի իրողությունները: Հաշվի առնելով, որ նախագծում ներառված երկներում նման ամբողջական վերլուծություններ, ուսումնասիրություններ և հետազոտություններ առաջին անգամ են կատարվում, կարծում ենք, որ արդյունքները շատ օգտակար են լինելու: Բոսնիա և Հերցեգովինայում, Կոսովոյում, Հայաստանում և Վրաստանում ստացված տվյալները և տեղեկատվությունը կարող են օգտագործվել կառավարության, ՀԿ-ների, այլ կառույցների կողմից:

Համոզված ենք, որ այս զեկույցները հիմք կհանդիսանան համապատասխան քաղաքականության մշակման հետագա քննարկումների համար՝ այդպիսով նպաստելով փաստահենք ՄՈՒԿ համակարգի կայացմանը:

Օգտվելով առիթից՝ ցանկանում ենք շնորհակալություն հայտնել նախագծի աշխատանքային խմբին, հեղինակներին և հետազոտական ընկերություններին արդյունավետ և պրոֆեսիոնալ համագործակցության, ինչպես նաև գերազանց արդյունքների և ձեռքբերումների համար՝ հատկապես նկատի ունենալով, որ հիմնական աշխատանքներն իրականացվել են ՔՈՎԻԴ-19 համավարակի դժվարին պայմաններում:

Մաղթում ենք ձեզ հետաքրքիր ընթերցանություն:

Եսթեր Հակոբյան

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի
հայաստանյան գրասենյակի
տնօրեն

Ներածական խոսք

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի Կովկասի և Հարավարևելյան Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակը 2019-2022թթ. նախաձեռնեց և իրականացրեց հետազոտությունների շարք, որն ուղղված էր ուսումնասիրելու Հայաստանում մեծահասակների ուսումնառության ու կրթության (ՄՈՒԿ) իրավիճակը՝ անկախացումից մինչև մեր օրերը:

Այս գրքույկում ներկայացված են Հայաստանում անցկացված մեծահասակների կրթության վերաբերյալ առաջին հետազոտության արդյունքները՝ հիմնված Եվրոպական մեծահասակների կրթության հետազոտության մեթոդաբանության վրա:

Ուսումնասիրության ընթացքում հավաքագրվել և վերլուծության են ենթարկվել Հայաստանի համար ներկայացուցչական տվյալներ մի քանի ոլորտներում, այդ թվում՝

- մեծահասակ բնակչության կրթական մակարդակը և հմտությունները,
- մեծահասակների կրթության վերաբերյալ ընկալումները և կրթական հնարավորությունները,
- մասնակցությունը կրթությանը և ուսուցմանը,
- հեռավար ուսուցմանը COVID-19-ի ընթացքում:

Զեկույցն ամփոփում է այնպիսի հետաքրքիր և կարևոր հարցերի վերաբերյալ բացահայտումներ, ինչպիսիք են՝ մասնակցությունը ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությանը և դրանց փոխկապակցվածությունը միմյանց հետ, կրթական հնարավորությունների մասին տեղեկատվության հասանելիությունը, մասնակցության/չմասնակցության պատճառները, կրթական ծրագրերի տեսակներն ու ձևաչափերը և այլն:

Այս արդյունքները Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կողմից կօգտագործվեն ՄՈՒԿ ջատագովությունը խթանելու, քաղաքականություն մշակողների և ՄՈՒԿ այն կառույցների իրազեկվածության բարձրացման համար, որոնցից կախված է ՄՈՒԿ հասանելիությունը, որակը, մոտիվացիան և այլն:

Առանձնահատուկ շնորհակալություն եմ ուզում հայտնել Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի հայաստանյան գրասենյակին, որն իրականացրել է ուսումնասիրությունը և Գերմանիայի Մեծահասակների կրթության ինստիտուտին՝ ցուցաբերած անգնահատելի մեթոդական ուղղորդման և աջակցության համար:

Հապավումների ցանկ

DIE	Գերմանիայի Մեծահասակների կրթության ինստիտուտ (German Institute for Adult Education)
Դի-Վի-Վի	Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտ DVV (Deutscher Volkshochschul-Verband)
ԿԴՄՍ	Կրթության դասակարգման միջազգային ստանդարտ (ISCED- International Standard Classification of Education)
ՀՌԿԿ-Հայաստան	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն Հայաստան
ՄԴՄՍ	Մասնագիտությունների դասակարգման միջազգային ստանդարտ (ISCO- International Standard Classification of Occupations)
ՄԿ	Մեծահասակների կրթություն
ՄԿՀ	Մեծահասակների կրթության եվրոպական հարցում
SS	Տնային տնտեսություն

Գործադիր ամփոփում

Սույն զեկույցում ամփոփված են Հայաստանում մեծահասակների կրթության (ՄԿ) հետազոտության արդյունքները, այդ թվում՝ ՄԿ ընկալումները, մասնակցությունը, ինչպես նաև առկա խնդիրները: Հետազոտության արդյունքները թույլ կտան բարելավել ՄԿ ջատագովության ջանքերը, ինչպես նաև ՄԿ աջակցության ծրագրերը: Միևնույն ժամանակ, հետազոտության մեթոդաբանությունը կարող է շարունակաբար կիրառվել Հայաստանի վիճակագրական ծառայությունների կողմից՝ կրթության բնագավառի հետազոտությունների և մշտադիտարկման համար: Հետազոտությունը պատվիրակվել է Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից և իրականացվել Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի (ՀՌԿԿ-Հայաստան) կողմից՝ Գերմանիայի Մեծահասակների կրթության ինստիտուտի աջակցությամբ (DIE):

Հետազոտության հիմքում ընկած է քանակական տվյալների հավաքագրումը և վերլուծությունը: Հարցաթերթիկը մշակվել է Մեծահասակների կրթության եվրոպական հարցման գործիքի հարցերի հիման վրա: Ավելացվել են նաև լրացուցիչ հարցեր՝ հայաստանյան իրավիճակը, ինչպես նաև ԿՈՎԻԴ-19 ճգնաժամի ազդեցությունը գնահատելու համար: Հետազոտությունն անդրադարձել է հետևյալ հարցերին.

- Միգրացիա,
- կրթություն և վերապատրաստում, այդ թվում՝ ֆորմալ կրթություն, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթություն/ուսումնառություն,
- կրթության և ուսումնառության հնարավորությունների և ուղղորդման վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն,
- զբաղվածություն
- մասնակցություն կրթական և վերապատրաստման ծրագրերին,
- մեծահասակների կրթության ընձեռած հնարավորությունների մասին ընկալումներ,
- հեռավար ուսուցումը ԿՈՎԻԴ-19-ի շրջանում:

Հետազոտությանը մասնակցել են 18-64 տարեկան 2440 հարցվողներ, որոնք ընտրվել են պատահական ստրատիֆիկացված ընտրանքով՝ դեմ առ դեմ հարցազրույցների համար: Դաշտային աշխատանքները իրականացվել են 2020 թ. նոյեմբերի 20-ից 2021թ. փետրվարի 20-ի ժամանակահատվածում՝ ԿՈՎԻԴ-19-ի շրջանում:

Հետազոտության արդյունքների համաձայն, հարցվողների միայն 4%-ն է մեկնել այլ երկիր 6 կամ ավելի ամսով և հետ վերադարձել: Այդուհանդերձ, շատ ավելի բարձր է (18%) այն հարցվողների թիվը, ովքեր տարբեր պատճառներից ելնելով ծրագրում են մեկնել ապագայում: Նշված պատճառների շարքում են արտերկրում աշխատանք գտնելու ավելի մեծ հավանականությունը, ավելի բարձր աշխատավարձերը, աշխատանքային ավելի լավ պայմանները: Հարցվողների կեսը (50%) ունեն միջնակարգ կրթություն, 22%-ը՝ միջին մասնագիտական, իսկ 27%-ը՝ բարձրագույն կրթության որոշ մակարդակ: Հարցվողների միայն մեկ երրորդն է (35%) լրիվ դրույքով զբաղված եղել, իսկ ևս մեկ երրորդը (31%)՝ գործազուրկ է: Հարցվողների 37%-ը նշում է, որ իրենց ներկա աշխատանքում ամբողջովին կամ մասամբ կիրառում են իրենց ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքները և հմտությունները: Այդուհանդերձ, հարցվողների համարյա կեսը (45%) նշում է, որ չի կիրառում ստացած գիտելիքները և հմտությունները: Հարցվողների գերակշիռ մեծամասնությունը (92%) նշում է, որ տիրապետում է մեկից ավելի լեզվի և ռուսերենը ամենատարածված (97%) երկրորդ օտար լեզուն է, որին հաջորդում է անգլերենը (33%): Ինչ վերաբերում է տեխնոլոգիական հմտություններին, հարցվողները առավել լավ են տիրապետում համացանցի որոնման գործիքներին և սոցիալական մեդիային: Թվային զարգացած հմտությունների մասին նշելու հավանականությունն ավելի բարձր է եղել առավել երիտասարդների, մայրաքաղաքում

բնակվողների և բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում:

Հարցվողների 8%-ը նախորդող 12 ամսվա ընթացքում ներգրավված է եղել ֆորմալ կրթության մեջ և համապատասխան կրթական ծրագրերի շուրջ կեսը եղել է բակալավրի կամ համարժեք աստիճանի մակարդակում: Ֆորմալ կրթության ամենատարածված բնագավառներն են բիզնեսը, կառավարումը և իրավունքը: Ուսուցումը աշխատանքի հետ համատեղող հարցվողների կեսից ավելին սովորում են աշխատանքային ժամերի ընթացքում: Ֆորմալ կրթության մեջ չներառվելու հիմնական պատճառների թվում նշվել են կարիքի բացակայությունը, ժամանակի բացակայությունը, ինչպես նաև՝ տարիքից ելնելով ֆորմալ կրթության մեջ ներգրավվելու աննպատակահարմարությունը:

Հարցվողների շուրջ 14%-ը նախորդող 12 ամսվա ընթացքում ներգրավված են եղել ոչ ֆորմալ կրթության մեջ: Ոչ ֆորմալ կրթության մեջ ներգրավվածները որպես ոչ ֆորմալ կրթության ամենատարածված տեսակ նշում են դասընթացները (7%), որին հաջորդում են աշխատարանները (5%): Ոչ ֆորմալ կրթության մեջ ներգրավման հավանականությունն ավելի բարձր է կանանց և բարձր որակավորում պահանջող մասնագետների շրջանում՝ տղամարդկանց և գործազուրկների համեմատ: Հարցվողների մեծ մասի (67%) պարագայում ոչ ֆորմալ կրթական գործունեությունը կապված է իրենց աշխատանքի հետ և տեղի է ունեցել աշխատանքային ժամերից դուրս (45%): Ոչ ֆորմալ կրթությանը մասնակցելու հիմնական պատճառների թվում նշվել է աշխատանքի կատարողականի բարելավումը (44%), առօրյա կյանքի համար օգտակար հմտությունների և գիտելիքների ձեռք բերումը (33%), ինչպես նաև կարիերայի հեռանկարների բարելավումը (32%): Ոչ ֆորմալ կրթական ծրագրերի մեկ երրորդից ավելին (39%) անվճար է, իսկ մասացածի համար վճարել է կամ հարցվողը կամ մեկ ուրիշը (43%), առավել հաճախ՝ գործատուն (76%): Հարցվողների շուրջ կեսը դրական են գնահատել իրենց ոչ ֆորմալ կրթական փորձը՝ նշելով աշխատանքի ավելի լավ կատարումը (24%), ինչպես նաև անձնական պատճառները (23%), այդ թվում՝ նոր մարդկանց հետ շփումները կամ ընդհանուր թեմաների վերաբերյալ հմտությունների թարմացումը:

Ընդհանուր առմամբ, հարցվողների կեսից ավելին համաձայն է, որ 30-ից բարձր տարիքի մարդիկ սովորելիս դժվարությունների են բախվում, ինչպես նաև վերջիններիս մոտ հետաքրքրության ու ժամանակի պակաս կա: Այս պնդման հետ ավելի հակված են չհամաձայնել նախորդ տարվա ընթացքում ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության մեջ ներգրավված կանայք, ինչպես նաև բարձրագույն կրթություն և մասնագիտական ավելի բարձր որակավորում ունեցողները: Հարցվողների մեծամասնությունը (59%) նաև կարծում է, որ ՄԿ-ը նրանց համար է, ովքեր շատ ազատ ժամանակ ունեն: Հարցվողների 22%-էլ կարծում է, որ ՄԿ-ին մասնակցությունը կախված է վճարելու հնարավորությունից, իսկ մեկ երրորդն էլ գտնում է, որ արհեստագործական մասնագիտություններով զբաղվողները կամ ՀԿ-երում աշխատողները ավելի մեծ հնարավորություն ունեն մասնակցելու ՄԿ ծրագրերի: 18-24 տարեկան երիտասարդները և բարձրագույն կրթություն ունեցողները ավելի քիչ են հակված համաձայնելու այս պնդումների հետ: Հարցվողների կեսից ավելին նշել է, որ պետությունն է պատասխանատվություն կրում կրթության ամբողջ շղթայի համար, այն է՝ կրթական կարիքների բացահայտումից մինչև աշխատանքի տեղավորում: Հարցվողների շուրջ կեսն էլ նշել է, որ նոր գիտելիք, հմտություններ սովորելու, աշխատանքային ավելի լավ հնարավորությունների, աշխատանքի կայունության և աշխատավարձի, ինչպես նաև որակավորումների ճանաչման տեսանկյունից ամենաարդյունավետը ֆորմալ կրթությունն է: Այս բոլոր առումներով հաջորդ տեղում ոչ ֆորմալ կրթությունն է, որը

համարվում է առավել արդյունավետ մեթոդ միայն գործնական հտությունների զարգացման (49%) և նոր մարդկանց հանդիպելու (44%) տեսանկյունից: Ինֆորմալ կրթությունը համարվել է անձնական զարգացման լավագույն մեթոդը: Հարցվողների համար ուսումնառության առավել գերադասելի տեսակը ֆորմալ կրթությունն է, որին հաջորդում է ինքնաուսուցումը և ոչ ֆորմալ կրթությունը: Կրթությունը, ջանասիրաբար աշխատելը և մասնագիտական կարողությունները նշվել են որպես աշխատանք գտնելու կարևորագույն գործոններ:

ԿՈՎԻԴ-19 համաճարակի արդյունքում հարցվողների միայն 12%-ն է մասնակցել հեռավար ուսումնառության ծրագրերի: Դրական պատասխանած հարցվողներն ավելի շատ հավանականությամբ մայրաքաղաքի բնակիչներ էին, քան գյուղաբնակներ: Հարցվողների երկու երրորդը (65%) դեմ առ դեմ ծրագրերը առցանց հարթակ տեղափոխվելու արդյունքում է, որ մասնակցել են հեռավար ուսումնառության ծրագրերի: Դպրոցական կամ համալսարանական ֆորմալ հեռավար կրթության մեջ ավելի շատ ներգրավված են եղել տղամարդիկ (68%՝ 52%-ի համեմատ), մինչդեռ կանայք ավելի շատ (47%՝ 26%-ի համեմատ) ներգրավվել են հեռավար այնպիսի ոչ ֆորմալ ծրագրերի, ինչպիսիք են դասընթացները կամ աշխատարանները: Որպես հեռավար կրթության առավելություն նշվել է ժամանակի խնայումը՝ ֆիզիկապես ուսումնական հաստատություն չգնալու արդյունքում (51%), ճանապարհածախսի խնայումը (41%), ինչպես նաև ընտանեկան և աշխատանքային պարտականությունների համատեղումը (19%): Թերությունների շարքում նշվել են դասավանդողի հետ շփման խնդիրը (48%), կենտրոնանալու դժվարությունը (45%) և գործնական աշխատանքի անհնարինությունը (35%): Հարցվողների մեծամասնությունը (74%) բավարարված է եղել հեռավար ուսումնառությամբ: Ընդհանուր առմամբ, հարցվողներն ավելի շատ բավարարված են եղել հեռավար ոչ ֆորմալ կրթության որակով՝ հեռավար ֆորմալ կրթության համեմատ:

Ներածություն

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը (Դի-Վի-Վի) մեծահասակների կրթության (ՄԿ) և զարգացման բնագավառում գործող գլոբալ միջազգային կազմակերպություն է: Հաշվի առնելով հատկապես ՄԿ մասնակցության վերաբերյալ հուսալի քանակական տվյալների բացակայության հանգամանքը Հայաստանում, Վրաստանում և Կոսովոյում, Դի-Վի-Վի-ն նախաձեռնել է ուսումնասիրության իրականացում, որը ներառում է նաև սույն հետազոտությունը: Ուսումնասիրության նպատակն է Դի-Վի-Վի-ի կողմից ՄԿ առաջխաղացման հիմքում դնել փաստահենք մոտեցում: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը Հայաստանում հետազոտության իրականացումը պատվիրակել է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնին (ՀՌԿԿ-Հայաստան), որին հարցման մեթոդաբանության մշակման և տվյալների վերլուծության հարցում աջակցել է Մեծահասակների կրթության գերմանական ինստիտուտը (DIE): Վերջինս միջազգային համեմատական հետազոտությունների անցկացման երկարաժամկետ փորձ ունի:

Հետազոտության արդյունքներն օգտագործվելու են Հայաստանում ՄԿ առաջխաղացման և զարգացման նպատակով: Հարցման մեթոդաբանությունը կարող է կիրառվել հայաստանյան վիճակագրական ծառայությունների կողմից հետագա կրթական հետազոտությունների անցկացման և մշտադիտարկման նպատակով: Սույն զեկույցում ներկայացված են Հայաստանում անցկացված հարցման արդյունքները:

Տվյալները հավաքվել են հետևյալ թեմաների վերաբերյալ.

- Մեծահասակ բնակչության կրթական մակարդակը և հմտությունները,
- մեծահասակների կրթության և կրթական հնարավորությունների մասին ընկալումները,
- մասնակցությունը կրթությանը և ուսումնառությանը,
- հեռավար ուսումնառությունը ԿՈՎԻԴ-19-ի ժամանակ:

Այս թեմաները վեր հանելու նպատակով սույն հետազոտության շրջանակներում կիրառվել է Մեծահասակների կրթության եվրոպական հարցման (ՄԿՀ) մեթոդաբանությունը: Հարցումն իրականացվել է 2020 թ. նոյեմբերի 20-ից 2021 թ. փետրվարի 20-ն ընկած ժամանակահատվածում: Այն ներկայացուցչական է ողջ Հայաստանի, ինչպես նաև մայրաքաղաք Երևանի, այլ քաղաքների և գյուղական բնակավայրերի համար: Ընդհանուր առմամբ հարցմանը մասնակցել են 2440 հարցվողներ, սխալի թույլատրելի շեղումը եղել է 2%, իսկ կայացած հարցազրույցները՝ 36%:

Սույն զեկույցը բաղկացած է երեք մասից: Առաջին մասում ներկայացվում է հետազոտության իրականացման մեթոդաբանությունը: Երկրորդ մասի հինգ գլուխներում ներկայացվում են հիմնական արդյունքները, այդ թվում՝ հարցվողների մասին ընդհանուր տվյալներ, կրթական հնարավորությունների հասանելիությունը, մասնակցությունը կրթությանը

և վերապատրաստումներին, մեծահասակների կրթության ընկալումները, ինչպես նաև հեռավար կրթությունը ԿՈՎԻԴ-19 համավարակի ժամանակ: Զեկույցն ավարտվում է եզրակացությունների մասով:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ չնայած հարցվողների ճնշող մեծամասնությունը (75%) նախորդող 12 ամսվա ընթացքում ներգրավված է եղել ինֆորմալ կրթության մեջ, միայն 14%-է մասնակցել ոչ ֆորմալ կրթական ծրագրերի, իսկ ֆորմալ կրթության մեջ ներգրավվածությունն ավելի ցածր է, այն է՝ 8%: Տվյալների համաձայն կանայք, երիտասարդները, ինչպես նաև կրթության ավելի բարձր մակարդակ ունեցողները ավելի մեծ հավանականությամբ են ներգրավված ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթական գործունեության մեջ: Թեպետ ֆորմալ կրթությունը հարցվողների կողմից նախընտրած ուսումնառության մեթոդն է, ոչ ֆորմալ կրթությունը դիտարկվում է որպես գործնական հմտությունները զարգացնելու (49%) և մարդկանց հանդիպելու, մասնագիտական ցանցն ընդլայնելու (44%) ամենաարդյունավետ մեթոդ:

Ընդհանուր առմամբ հարցվողների աննշան մեծամասնությունը (57%) չի կարծում, որ սովորելն ավելի դժվարանում է 30 տարեկանից հետո: Նման կարծիքի ավելի հակված են կանայք և բարձրագույն կրթություն ունեցողները: Այդուհանդերձ, հարցվողների մեծ մասը համաձայն է, որ մինչև 30 տարեկանները ավելի հակված են սովորելու, որ նոր հմտություններ սովորելը այդ խմբի համար ավելի հեշտ է և 30 տարեկանից բարձրերը շատ պարտականություններ ունեն կրթությունը շարունակելու համար:

Մեթոդաբանություն

Հետազոտության հիմքում ընկած է քանակական տվյալների հավաքագրումը և վերլուծությունը: Ջեկույցի այս մասում ներկայացվում են տվյալների հավաքագրմանը, հարցաթերթիկի մշակմանը, ընտրանքին, հարցման հիմնական բնութագրերին և տվյալների վերլուծությանն առնչվող ընդհանուր մոտեցումներ:

Տվյալների հավաքագրում

Հետազոտության համար կիրառվող հարցաթերթիկը մշակվել է Մեծահասակների կրթության եվրոպական հետազոտության հիման վրա: Ավելացվել են լրացուցիչ հարցեր Հայաստանի կոնկրետ իրավիճակն արձանագրելու, ինչպես նաև ԿՈՎԻԴ-19 համավարակի արդյունքում ստեղծված ճգնաժամին անդրադառնալու նպատակով: Հարցաթերթիկը կազմվել է DIE փորձագետների հետ համատեղ: Հարցաթերթիկի վերջնական տարբերակը հաստատվել է Դի-Վի-Վի հայաստանյան և տարածաշրջանային գրասենյակների կողմից: Այն ներառում է հարցեր հետևյալ թեմաների վերաբերյալ.

- Միգրացիա,
- կրթություն և վերապատրաստում, այդ թվում՝ ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցմառություն,
- ուսուցմառության հնարավորությունների մասին տեղեկատվության հասանելիություն և ուղղորդում,
- զբաղվածության կարգավիճակ,
- կրթական և վերապատրաստման ծրագրերին մասնակցություն,
- մեծահասակների կրթության հնարավորությունների վերաբերյալ ընկալումներ,
- հեռավար ուսուցմառությունը ԿՈՎԻԴ-19-ի ժամանակ,
- ժողովրդագրական տվյալներ:

Ներկայացուցչական տվյալներ հավաքագրելու նպատակով ՀՌԿԿ-Հայաստանը կիրառել է ստրատիֆիկացված կլաստերային ընտրանք: Ընտրանքի առաջնային միավոր են հանդիսացել ընտրատարածքները, իսկ տնային տնտեսությունները (ՏՏ)՝ երկրորդային միավորներ: Կլաստերում տնային տնտեսություններ ընտրելու համար կիրառվել է պատահական քայլի մեթոդը, իսկ հարցվողներն ընտրվել են Քիշի աղյուսակի միջոցով: Հետազոտությունում ներգրավվել են 18-64 տարեկան 2440 հարցվող, սխալի թույլատրելի շեղումը եղել է 2%, իսկ կայացած հարցազրույցների տոկոսը՝ 36%: Հարցումն իրականացվել է 2020թ. նոյեմբերի 20-ից 2021թ. փետրվարի 20-ն ընկած ժամանակահատվածում, ԿՈՎԻԴ-19-ի պայմաններում[1]:

Ստորև աղյուսակում ներկայացված են հետազոտության բնութագրերը ըստ ստրատայի:

Պատկեր 1: Հետազոտության բնութագրերը

Ստրատա	Ընտրանքի չափ	Կայացած հարցազրույցներ
Երևան	879	29%
Քաղաքային համայնքներ	618	30%
Գյուղական համայնքներ	943	46%
Ընդամենը	2,440	36%

[1] Նախատեսվում էր հետազոտությունն անցկացնել 2020թ. մարտին, սակայն դեմ առ դեմ հարցազրույցների անցկացումը ապահովելու համար այն հետաձգվեց մինչև նոյեմբեր: Քանի որ որոշում էր կայացվել չհրաժարվել դեմ առ դեմ հարցազրույցների մեթոդից, համաճարակի պայմաններում դաշտային աշխատանքները տևեցին չորս շաբաթ՝ նախատեսված երկու շաբաթի փոխարեն:

Տվյալների վերլուծություն

Հետազոտության վերլուծության համար հիմնականում կիրառվել է կշռված տվյալների վրա հիմնված նկարագրողական վիճակագրություն, այդ թվում՝ պարզ հաճախականություններ և խաչաձև աղյուսակներ: Հաճախականությունները ներկայացնում են երկրի ընդհանուր իրավիճակը, իսկ խաչաձև վերլուծությունը դասակարգում է տվյալները ըստ տարբեր խմբերի: Սույն զեկույցում խաչաձև աղյուսակները ներկայացված են հետևյալ փոփոխականների համար.

- Բնակավայրի տեսակը (Երևան, այլ քաղաքներ, գյուղական համայնքներ),
- տարիքային խումբ (18-24, 25-44, 45-64),
- սեռ,
- կրթական մակարդակ (միջնակարգ կրթություն, մասնագիտական կրթություն, բարձրագույն կրթություն):

Բոլոր պատկերներում պատասխանները ներկայացված են որպես ընդհանուրի տոկոս (հարցվողների թիվը (n) նշված է պատկերի վերնագրում): Զեկույցի տեքստում արդյունքները կլորացվում են մոտակա ամբողջական թվով[2], իսկ պատկերում ներառված են նաև տասնորդական միավորները:

ISCED/ԿԴՄՄ Կրթության դասակարգման միջազգային ստանդարտ

Այս հետազոտության շրջանակներում ֆորմալ կրթությունը դասակարգվել է ԿԴՄՄ համակարգով՝ հիմնվելով Որակավորումների ազգային շրջանակի և տեղական համատեքստի վրա:

Պատկեր 2: ISCED/ԿԴՄՄ համապատասխանեցումը

ISCED/ԿԴՄՄ	Հայաստանյան դասակարգում	Ընդհանրացված խմբեր
ISCED 0: Early childhood education	Նախադպրոցական կրթություն	Միջնակարգ
ISCED 1: Primary education	Տարրական կրթություն	
ISCED 2: Lower secondary education	Հիմնական կրթություն	
ISCED 3: Upper secondary education	Միջնակարգ կրթություն/նախնական մասնագիտական (արհեստագործական) հիմնական կրթության հենքի վրա / Միջին մասնագիտական կրթություն հիմնական կրթության հենքի վրա	
ISCED 4: Post-secondary non-tertiary education	Նախնական մասնագիտական (արհեստագործական) միջնակարգ կրթության հենքի վրա	Մասնագիտական
ISCED 5: Short-cycle tertiary education	Միջին մասնագիտական կրթություն միջնակարգ կրթության հենքի վրա	
ISCED 6: Bachelor's or equivalent level	Բակալավր	Բարձրագույն
ISCED 7: Master's or equivalent level	Մագիստրոս կամ դիպլոմավորված մասնագետ	
ISCED 8: Doctoral or equivalent level	Հետդուհական կրթություն	

[2] Կլորացվել է դեպի մոտակա ամբողջ թիվը:

Հիմնական արդյունքներ

Զեկույցի այս բաժնում ներկայացված են հետազոտության հիմնական արդյունքները: Այն սկսվում է հարցվողների հիմնական բնութագրերի նկարագրությամբ՝ միգրացիայի և կրթական մակարդակի տեսանկյունից: Այնուհետև ներկայացվում են ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությանը և վերապատրաստումներին մասնակցությանն առնչվող տվյալները, որին հաջորդում է ՄԿ-ի վերաբերյալ հարցվողների ընկալումների մասը: Վերջին ենթաբաժինը տվյալներ է տրամադրում ԿՈՎԻԴ-19-ի պայմաններում հեռավար կրթության վերաբերյալ:

Հարցվողների հիմնական բնութագրերը

Այս ենթաբաժնում ներառված են հարցվողների մի շարք բնութագրերի մասին տվյալներ, այդ թվում հետևյալ փոփոխականների կշռված բաշխումը՝ սեռ, տարիք, կրթական մակարդակ, էթնիկ խումբ, միգրացիոն կարգավիճակ, եկամտի մակարդակ, բնակավայրի տեսակ, լեզուների իմացություն, ինչպես նաև զբաղվածություն/գործազրկություն:

Ժողովրդագրական տվյալներ

Հարցվողների ընդհանուր թվում կանանց և տղամարդկանց կշռված բաշխումը համապատասխանաբար 54 և 46 % է: Հարցվողների միջին տարիքը 40 է, իսկ հարցվողների կեսից ավելիի տարիքը բարձր է 41-ից (մեդիան): Տարիքային տվյալները դասակարգվել են երեք խմբում (18-24, 25-44, 45-64) և խմբերի մասնաբաժինը եղել է համապատասխանաբար 13%, 50% և 37%՝ 18-24, 25-44 և 45-64 խմբի համար: Երևանում հարցվողների մասնաբաժինը կազմել է 33%, այլ քաղաքներում՝ 30%, իսկ գուղական վայրերում՝ 37%: Ընդհանուր առմամբ կշռված ընտրանքի 99%-ը կազմել են հայերը:

Միգրացիոն տվյալներ

Հետազոտությունը դիտարկել է հարցվողների քաղաքացիությունը և միգրացիոն կարգավիճակը: Ընդհանուր առմամբ, հարցվողների 99%-ը Հայաստանի քաղաքացիներ են, 1%-ը ունի կրկնակի քաղաքացիություն, իսկ 0.5%-ը այլ երկրների քաղաքացի են: Հարցվողների գերիշխող մեծամասնությունը ծնվել է Հայաստանում (95%) և միայն աննշան մասն է ծնվել այլ երկրներում (5%):

Ինչ վերաբերում է միգրացիային, հարցվողների 4%-ն է ասել, որ հարցմանը նախորդող վեց ամիսների ընթացքում[3] ապրել է այլ երկրում և այնուհետև վերադարձել Հայաստան:

Պատկեր 3:

Միգրացիոն կարգավիճակ

«Արդյո՞ք վերջին 6 ամիսների ընթացքում բնակվել եք այլ երկրում, ապա վերադարձել Հայաստան» (n=2440)



[3] Հարցումն իրականացվել է 2020թ. նոյեմբերից 2021թ. փետրվար ժամանակահատվածում:

Հարցվողները պատասխանել են միգրացիայից վերադառնալու պատճառների մասին հարցին: Որպես հիմնական պատճառ նշվել են ընտանեկան խնդիրները (34%), հակամարտությունը/պատերազմը[4] (14%), աշխատանքի թույլտվության ժամկետի լրանալը (14%), ինչպես նաև ամուսնությունը/վերամիավորումը ընտանիքի հետ (8%):

Պատկեր 4:

Միգրացիայից վերադառնալու պատճառները

«Ինչու՞ եք վերադարձել» (բազմակի պատասխաններով հարց, n=78)



[4] Սա վերաբերում է 2020թ.-ի Արցախյան երկրորդ պատերազմին

Հարցման մասնակիցներին նաև հարց է տրվել իրենց միգրացիոն մտադրությունների մասին: Տվյալների համաձայն, հարցվողների 18%-ը նախատեսում է առաջիկա մի քանի տարում մեկնել արտասահման՝ ապրելու և/կամ աշխատելու նպատակով: Առավել մեծ հավանականությամբ նման մտադրության մասին հայտնել են տղամարդիկ (23%) և 18-35 տարեկան երիտասարդները (23%):

Պատկեր 5:

Միգրացիոն մտադրություններ

«Արդյո՞ք պլանավորում եք առաջիկա երեք տարում ապրել կամ/և աշխատել այլ երկրում» (n=2440)



Ինչ վերաբերում է միգրացիայի պատճառներին, ապա հետազոտությունից հետևում է, որ դրանցից հիմնականը «արտասահմանում ավելի հեշտությամբ աշխատանք գտնելն է» (42%): Հարցվողների երեսուն տոկոսը (30%) նշել է, որ «այնտեղ աշխատանքային պայմաններն ավելի լավն են» և որ «աշխատավարձն ավելի բարձր է» և միայն 3%-է որպես Հայաստանից գնալու պատճառ նշել «կրթական հնարավորությունների բացակայությունը»:

Պատկեր 6:

Միգրացիայի պատճառները

«Ինչու՞ եք ցանկանում առաջիկա երեք տարում ապրել կամ/և աշխատել այլ երկրում» (n=420)



Կրթական մակարդակ

Հարցվողների կրթական մակարդակի վերաբերյալ ընդհանուր տվյալները ներկայացված են ստորև պատկերում: Հաշվի առնելով, որ որոշ կրթական մակարդակներում ընտրանքի չափը փոքր է, զեկույցի մնացած մասերում տվյալները ներկայացված են հետևյալ խմբերի համար՝ միջնակարգ կամ ավելի ցածր կրթություն (50%), մասնագիտական կրթություն (22%) և բարձրագույն կրթություն (27%)[5]:

Պատկեր 7:

Կրթական մակարդակ

«Ո՞րն է Ձեր կրթության ամենաբարձր աստիճանը» (n=2440)



Երբ կրթական մակարդակի մասին տվյալները վերլուծվում են համադրվելով ժողովրդագրական բնութագրերի հետ, ի հայտ են գալիս մի շարք ակնկալվող տարբերություններ: Ավելի մեծ է հավանականությունը, որ Երևանում բնակվող (41%) և այլ քաղաքներում բնակվող (26%) հարցվողներն ունենան բարձրագույն կրթություն՝ գյուղական համայքներում բնակվողների (16%) համեմատ: Քսանհինգից մինչև քառասուն չորս (25-44) տարեկաններն առավել հաճախ են նշել որոշ բարձրագույն կրթության առկայության մասին (34%)՝ 45 և դրանից բարձր տարիքի հարցվողների համեմատ (23%):

[5] Հարցի տարբերակները խմբավորվել են հետևյալ կերպ՝ միջնակարգ (ISCED 0-3), մասնագիտական (ISCED 4-5) և բարձրագույն (ISCED 6-8) կրթություն:

Հարցվողները նաև տեղեկություններ են տրամադրել իրենց ծնողների կրթական մակարդակի մասին: Ստորև պատկերը ցույց է տալիս ծնողների կրթական մակարդակն ըստ սեռի: Տվյալների համաձայն հարցվողների 50%-ի մայրերը և հայրերը ունեն միջնակարգ կրթություն, հայրերի 20%-ը և մայրերի 22%-ը ունեն միջին մասնագիտական կրթություն, մայրերի և հայրերի 18%-ը ունեն բարձրագույն կրթություն, իսկ հայրերի 9%-ը և մայրերի 8%-ը՝ տարրական կրթություն[6]:

Պատկեր 8:

Ծնողների կրթական մակարդակը

«Ո՞րն է Ձեր ծնողների/խնամակալի կրթության ամենաբարձր աստիճանը» /հայր/մայր/ (n=2440)



[6] Ծնողների կրթության մասին հարցերի տարբերակները տեղայնացվել են. «միջնակարգի ցածր դասարաններ» վերաձևակերպվել է «տարրականի», «միջնակարգի բարձր դասարաններ» վերաձևակերպվել է «հիմնականի», «նախնական մասնագիտական/արհեստագործական» վերաձևակերպվել է «միջին մասնագիտականի» և «մասնագիտական»՝ «բարձրագույնի»:

Զբաղվածություն

Հարցումը ցույց է տվել, որ որ հարցվողների շուրջ կեսը (46%) զբաղված են (35% լրիվ դրույքով և 11% կես դրույքով), 4%-ը սովորում է, 31%-ը գործազուրկ է և 19%-ը ակտիվ չի (չի աշխատում կամ աշխատանք չի փնտրում): Ի լրումն, աշխատուժից դուրս մնացածների և գործազուրկների 24%-ը նշել են, որ նախորդ 12 ամիսների ընթացքում ունեցել են որևէ աշխատանք, այն է՝ անվճար աշխատանք ընտանեկան բիզնեսի համար, ուսնակություն կամ այլ նմանատիպ գործունեություն: Ավելի երիտասարդների (18-24 տարեկան) 28%-ը ունեցել է մասնակի կամ լրիվ զբաղվածություն, 29%-ը գործազուրկ է, 27%-ը ուսումնառու, իսկ 15%-ը այլ պատճառներով ակտիվ չէ[7]:

Պատկեր 9:

Զբաղվածության կարգավիճակ

«Արդյո՞ք Դուք իրականացնում եք վճարվող կամ չվճարվող աշխատանք ներառյալ ընտանեկան բիզնեսում, փորձնակ եք, կամ իրականացնում եք վճարովի պրակտիկա և այլն» (n=2440)



[7] Այս արդյունքները համադրելի են 2019թ. Աշխատուժի հետազոտության տվյալների հետ (միկրոտվյալներ, կշռված արդյունքներ), համաձայն որի 18-64 տարեկանների 52%-ը նախորդ տարվա ընթացքում առնվազն մեկ ժամվա զբաղվածություն են ունեցել: Նույն ցուցանիշը 18-24 տարեկանների խմբի համար 32%-է: Հետազոտության տվյալների համաձայն 18-24 տարեկանների 44%-ը նշել է, որ իրենք չունեն աշխատանք, ներգրավված չեն կրթության մեջ կամ դասընթացներում (NEET-Young People Not in Employment, Education or Training).

Զբաղվածների 42%-ը աշխատում է մասնավոր հատվածում, 35%-ը հանրային հատվածում/ կառավարությունում, 21%-ը ինքնազբաղված է, իսկ 1%-ը աշխատում է միջազգային կառույցներում և հասարակական կազմակերպություններում (ՀԿ):

Պատկեր 10:

Գործատուի տեսակը

«Ո՞րն է Ձեր գործունեության ոլորտը (ներկայիս աշխատանքի)» (n=1105)



Ստորև պատկերը ներկայացնում է ISCO 08 մասնագիտությունների դասակարգման երկնիշ մակարդակի շրջանակներում բաշխվածությունը ըստ հիմնական խմբի (միանիշ թվերի մակարդակ): Զինված ուժերը, որը ներառված չէ ISCO մասնագիտական կարգերում (3%) ավելացվել է բաց հարցերի պատասխանների հիման վրա: Տվյալների համաձայն, հարցվողների 19%-ը ղեկավարներ կամ մասնագետներ են, 24%-ը տեխնիկական բնույթի աշխատողներ են, գրասենյակային օժանդակ աշխատակիցներ, կրտսեր մասնագետներ: Հարցվողների 18%-ը ներգրավված է ծառայություններում և վաճառքի աշխատանքներում և վերջինս իրենից ներկայացնում է մասնագիտական ամենամեծ խումբը: Գործարանային աշխատողների խումբը հարցվողների 13%-ն է:[8]

Պատկեր 11:

Զբաղվածության/մասնագիտական ենթախմբեր

«Ո՞րն է Ձեր զբաղմունքը (հիմնական աշխատանքը)» (n=1105)



Մասնագիտական գործունեության մասին տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալական և ժողովրդագրական տեսանկյունից մասնագիտական կարգավիճակը տարբերվում է ըստ մի քանի գործոնի: Զբաղվածների խմբում մասնագիտական ավելի բարձր կարգավիճակ ունենալու հավանականությունը ավելի մեծ է մայրաքաղաքի բնակիչների, կանանց, բարձրագույն կրթություն ունեցողների և 18-44 տարեկանների շրջանում:

[8] Ըստ մասնագիտական հմտությունների մակարդակի տվյալները դասակարգվել են չորս հիմնական ենթախմբերում (ISCO դասակարգիչ 1,2,3՝ բարձրակարգ աշխատողներ, ISCO դասակարգիչ 4,5՝ ցածր հմտություններով աշխատողներ, ISCO դասակարգիչ 6,7՝ բարձր որակավորմամբ ֆիզիկական/տեխնիկական աշխատանք անողներ, ISCO դասակարգիչ 8,9՝ ցածր որակավորմամբ ֆիզիկական/տեխնիկական աշխատանք անողներ: Զինված ուժերը դիտարկվել է որպես առանձին ենթախումբ:

Հարցվողները տեղեկություններ են տրամադրել նաև իրենց ամսական եկամտի և ծախսերի մասին: Եկամտի մասին ստացված տվյալներից հետևում է, որ տնային տնտեսությունների 45%-ի եկամուտը ամսական 165 հազար դրամից ցածր է: Հետաքրքրական է, որ ըստ հարցվողների, նրանց ծախսերը մի փոքր ավելի են, քան:

Պատկեր 12:

Տնային տնտեսության ամսական եկամտուտը/ծախսերը

«Որքա՞ն են Ձեր տնային տնտեսության զուտ /հարկերից հետո/ ամսական եկամուտը, ծախսերը» (n=2440)



Գիտելիք և հմտություններ

Հարցվողները գնահատել են, թե իրենց ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքները ու ձեռք բերած հմտությունները ինչպես են կիրառվում իրենց ընթացիկ աշխատանքում: Հարցվողների երեսուն յոթ տոկոսը (37%) նշել է, որ իրենք մասամբ կամ ամբողջությամբ կիրառել են իրենց գիտելիքները և հմտությունները, մինչդեռ 45%-ը պատասխանել է, որ չեն կիրառել սովորելու ընթացքում ստացած գիտելիքն ու հմտությունները:

Պատկեր 13:

Գիտելիքի և հմտությունների կիրառում

«Որքանո՞վ են ուսման ընթացքում ձեռք բերված գիտելիքներն ու հմտություններն օգտագործվում Ձեր ընթացիկ աշխատանքում» (n=1105)



Հարցվողներից տվյալներ են ստացվել նաև տարբեր լեզուներ տիրապետելու վերաբերյալ: Գրեթե բոլոր հարցվողները (98%) որպես իրենց մայրենի լեզու նշել են հայերենը, որին հաջորդել է ռուսերենը (1%), իսկ քրդերենն ու ասորերեն որպես մայրենի լեզու նշվել են հարցվողների 1%-ից պակասի կողմից:

Պատկեր 14:
Մայրենի լեզու(ներ)

«Ո՞ր լեզուն(երն) է/են Ձեր մայրենի լեզուն(երը)» (n=2440)



Հարցվողների բավականին փոքր տոկոսն է (8%), որ բացի մայրենի լեզվից այլ լեզվի չի տիրապետում: Հարցվողների մեծամասնությունը (55%) տիրապետում է մեկ օտար լեզվի, 33%-ը՝ երկու, իսկ 5% տիրապետում է երեք կամ ավելի օտար լեզվի:

Պատկեր 15:

Օգտագործվող լեզուների թիվը՝ բացի մայրենի լեզվից/լեզուներից

«Բացի Ձեր մայրենի լեզվից, քանի՞ լեզվի եք տիրապետում» (n=2440)



Որպես երկրորդ օտար լեզու առավել հաճախ նշվել է ռուսերենը (97%), որին հաջորդել է անգլերենը (33%), գերմաներենը (4%) և ֆրանսերենը (4%): Ռուսերենը որպես օտար լեզու ընտրողների շրջանում տարբերություններ չկան, իսկ անգլերենի պարագայում առավել հավանական է, որ այդ լեզվին տիրապետում են երիտասարդները, բարձրագույն կրթություն ունեցողները, ինչպես նաև մայրաքաղաքի բնակիչները: Կանայք (38%) նույնպես անգլերենը ավելի հաճախ են նշել որպես օտար լեզու քան տղամարդիկ (28%):

Պատկեր 16:

Այլ լեզուների իմացությունը

«Ձեր նշած լեզուներից ո՞ր մեկին եք լավագույնս տիրապետում (բացառությամբ Ձեր մայրենի լեզուն)» (բազմակի պատասխաններով հարց, n=2258)



Եթե բացառենք մայրենի լեզուն, ապա իմացած լեզուների շարքում հարցվողների 89%-ը ավելի լավ տիրապետում է ռուսերենին, որին հաջորդում է անգլերենը (6%) և հայերենը (2%): Մյուս բոլոր լեզուներին տիրապետելու մասին նշել է հարցվողների 3%-ից պակասը:

Պատկեր 17:

Առավել լավ իմացած երկրորդ լեզուն

«Նախկինում նշված լեզուներից ո՞րն ավելի լավ գիտեք (բացառությամբ մայրենիի)»
(n=2258)



Հարցման մասնակիցներին հարց է տրվել օտար լեզվի իմացության մակարդակի մասին: Հարցվողների մեկ երրորդից մի փոքր ավելին (36%) կարող են հասկանալ լեզուն և կազմել պարզ տեքստեր: Եվս 32%-ը հասկանում են լեզուն և կիրառում ամենատարածված առօրեական արտահայտությունները, իսկ 21%-ը կարող է հասկանալ բարդ տեքստեր և ճկուն ձևով կիրառել լեզուն: Հարցվածների ընդամենը 10%-է նշել, որ իրենք միայն կարող են հասկանալ լեզուն և օգտագործել մի քանի բառեր ու արտահայտություններ: Երևանում բնակվող հարցվողների երեսուն երկու տոկոսը (32%) կարող է ազատորեն օգտագործել որևէ օտար լեզու, իսկ այլ քաղաքներում այդ ցուցանիշը ընդամենը 18%-է: Ինչ վերաբերում է գյուղական վայրերին, ապա հարցվողների միայն 13%-ն է ազատ խոսում օտար լեզվով: Օտար լեզվի սահուն կիրառումը պայմանավորվում է նաև բարձրագույն կրթությամբ:

Պատկեր 18:

Առավել լավ իմացած լեզվի տիրապետման մակարդակը

«Նշված դեպքերից ո՞ր մեկն է լավագույնս նկարագրում Ձեր կողմից նշած առաջին լեզվի իմացության գիտելիքները (բացառությամբ մայրենի լեզուն)» (n=2258)



Հետազոտության շրջանակներում դիտարկվել են նաև հարցվողների թվային հմտությունները, այն է՝ սոցիալական մեդիայի, համացանցի, համակարգչային հավելվածների օգտագործումը, համացանցային որոնման կիրառումը, ինչպես նաև մասնակցությունը առցանց դասընթացներին: Հարցվողները առավել հարմարավետորեն օգտագործում են համացանցային որոնման գործիքները (39%), որին հաջորդում է սոցիալական ցանցերը (35%), համակարգչային հավելվածները (17%) և առցանց դասընթացներին մասնակցությունը (16%): Թվային գործիքների իմացության տեսանկյունից առկա են մի քանի բնութագրերով պայմանավորված տարբերություններ: Ավելի մեծ հավանականությամբ թվային գործիքների իմացության բարձր մակարդակի մասին նշել են երիտասարդները, մայրաքաղաքի բնակիչները և բարձրագույն կրթություն ունեցողները:

Պատկեր 19:

Թվային գործիքների իմացությունը

«Նշված մակարդակներից ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր կարողությունը հետևյալում..» (n=2440)



Հարցվողների հիմնական բնութագրերի ամփոփում

Գրեթե բոլոր հարցվողները Հայաստանի քաղաքացիներ են՝ կանանց և տղամարդկանց մոտավորապես հավասար մասնաբաժնով: Հարցվողների միայն 4%-է նախորդ վեց ամսվա կամ ավելի վաղ ժամանակահատվածում արտագաղթել այլ երկիր և վերադարձել: Այդուհանդերձ, զգալիորեն ավելի մեծ է նրանց թիվը (18%), ովքեր ցանկություն են հայտնել արտագաղթել ապագայում: Պատճառների թվում հարցվողները նշել են արտասահմանում աշխատանք գտնելու ավելի մեծ հնարավորությունը, ավելի բարձր աշխատավարձը, ավելի լավ աշխատանքային պայմանները: Հարցվածների կեսը (50%) ունի միջնակարգ կրթություն, մինչդեռ 22%-ը ունի մասնագիտական, իսկ 27%-ը՝ որոշ բարձրագույն կրթություն: Ծնողների կրթության մակարդակի մասին հարցվողների մեծամասնությունը նշել են ընդհանուր միջնակարգ կրթությունը: Հարցվողների միայն մեկ երրորդն է (35%) զբաղված լրիվ դրույքով, իսկ ևս մեկ երրորդը (31%) գործազուրկ է: Թեև հարցվողների 37%-ը ասել է, որ մասամբ կամ ամբողջովին կիրառում են ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքները և հմտությունները իրենց ընթացիկ աշխատանքում, շուրջ կեսը (45%) նշել է, որ չի կիրառում ուսումնառության ընթացքում ստացած գիտելիքները և հմտությունները: Հարցման մասնակիցների ճնշող մեծամասնությունը (92%) նշել է, որ գիտեն մեկ լեզվից ավելի: Ռուսերենը առավել տարածված երկրորդ լեզուն է (97%), որին հաջորդում է անգլերենը (33%): Ինչ վերաբերում է թվային հմտություններին, հարցվողներն իրենց առավել հարմարավետ են զգում համացանցային որոնման գործիքներ և սոցիալական ցանցեր օգտագործելիս: Առավել մեծ հավանականությամբ ավելի զարգացած թվային հմտությունների մասին նշել են երիտասարդները, մայրաքաղաքի բնակիչները, ինչպես նաև բարձրագույն կրթություն ունեցողները:

Կրթական հնարավորությունների մասին տեղեկատվության և ուղղորդման հասանելիություն

Հետազոտության մասնակիցներին հարց է ուղղվել կրթական հնարավորությունների մասին տեղեկատվության և ուղղորդման հասանելիության վերաբերյալ: Տվյալներից պարզ է դառնում, որ հարցվողների 16%-ը վերջին 12 ամսվա ընթացքում փնտրել է տեղեկություններ կրթական հնարավորությունների մասին՝ ֆորմալ, ոչ ֆորմալ կրթության և դասընթացների ուղղությամբ:

Պատկեր 20:

Ուսումնառության հնարավորություններ փնտրողների թիվը

«Վերջին 12 ամիսների ընթացքում փնտրե՞լ եք արդյոք որևէ տեղեկատվություն ուսման հնարավորությունների վերաբերյալ (ֆոմալ/ոչ ֆորմալ կրթության կամ վերապատրաստման վերաբերյալ)» (n=2440)



Ընդհանուր առմամբ, կրթական հնարավորությունների մասին տեղեկատվություն փնտրելը առավել տարածված է եղել մայրաքաղաքում (21%) ՝ գյուղական վայրերի համեմատ (9%): Կանայք (19%) առավել ակտիվ են փնտրել նոր կրթական հնարավորություններ քան տղամարդիկ (12%): Այս առումով ավելի ակտիվ են եղել նաև 18-35 տարեկան երիտասարդները (45%) ՝ 56-64 տարեկանների խմբի համեմատ (5%): Բարձրագույն կրթություն ունեցողները (26%) նույնպես ավելի մեծ հավանականությամբ են տեղեկություններ փնտրել: Տեղեկատվություն փնտրած հարցվողների մեծամասնությունը (84%) գտել է իր համար օգտակար տեղեկությունները: Նման հարցվողների շրջանում մայրաքաղաքի բնակիչները (89%), երիտասարդները, այն է՝ 18-24 տարեկանները (89%), և բարձր որակավորում ունեցող մասնագետները (92%) ավելի մեծ հավանականությամբ են գտել իրենց անհրաժեշտ տեղեկությունները:

Պատկեր 21:

Փնտրած տեղեկությունները գտնելը

«Կարողացե՞լ եք գտնել որևէ տեղեկություն» (n=388)



Տեղեկատվություն գտնելու երեք հիմնական աղբյուրներն են համացանցը առանց սոցիալական ցանցերի (67%), սոցիալական ցանցերը (27%) և ուսումնական հաստատությունները (18%):

Պատկեր 22:

Տեղեկատվության հիմնական աղբյուրները

«Որտեղի՞ց եք գտել տեղեկատվություն ուսումնական գործունեության/սովորելու հնարավորությունների վերաբերյալ» (բազմակի պատասխաններով հարց, n=327)



Կրթական հնարավորությունների մասին տեղեկատվության և ուղղորդման հասանելիություն վերաբերյալ արդյունքների ամփոփում

Ընդհանուր առմամբ, հարցվողների մեծամասնությունը (84%) չի փնտրել տեղեկություններ կրթական հնարավորությունների մասին: Ինչ վերաբերվում է նման տեղեկություններ փնտրողներին և գտածներին (16%), ապա մեծամասնությունը գտել է տեղեկությունները համացանցում (67%) և սոցիալական ցանցերում (27%), իսկ թերթերից և ամսագրերից (1%) և դրսում տեղադրված գովազդային վահանակներից (1%) առավել քիչ են նման տեղեկությունները ստացվել: Բացի այդ, տվյալներից հետևում է, որ կրթական հնարավորությունների մասին տեղեկություններ փնտրողներն են մայրաքաղաքի բնակիչները (89%), 18-24 տարեկանները (89%) և բարձր որակավորմամբ մասնագետները (92%):

Մասնակցությունը կրթական ծրագրերին և դասընթացներին

Հետազոտության շրջանակներում բազմաթիվ հարցեր են տրվել ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթական ծրագրերին ու դասընթացներին մասնակցության մասին: Ընդհանուր առմամբ, վերջին 12 ամսում հարցվողների 8% ասել է, որ իրենք ներգրավված են եղել ֆորմալ կրթության մեջ, 75%-ը ներգրավված է եղել ինֆորմալ կրթության մեջ, իսկ 14%-ը՝ ոչ ֆորմալ կրթության մեջ: Զեկույցի այս բաժնում ներկայացվում են կրթական գործունեության մեջ մասնակցության վերաբերյալ արդյունքները:

Ֆորմալ կրթություն

Այսպիսով, հարցման մասնակիցների 8%-ը նախորդ 12 ամիսների ընթացքում ներգրավված է եղել ֆորմալ կրթության մեջ՝ որակավորում ստանալու ակնկալիքով: Ֆորմալ կրթության մեջ ներգրավվածների մեծամասնությունն (90%) ասել է, որր ներգրավված է մեկ ֆորմալ կրթական ծրագրում: Հարցվողների մասացած մասը (10%) նշել է, որ ներգրավված է երկու ծրագրում: Ինչ վերաբերում է ֆորմալ կրթության վրա ծախսած ժամանակին՝ միջինում վերջին 12 ամսվա ընթացքում ծախսել է 325 ժամ, իսկ միջնարժեքը/մեդիանի արժեքը 204 է:

Պատկեր 23:

Ներգրավվածությունը ֆորմալ կրթությանը

«Վերջին 12 ամիսների ընթացքում սովորե՞լ եք արդյոք որակավորում ստանալու նպատակով» (n=2440)



Ֆորմալ կրթության մեջ ներգրավվածները հիմնականում մասնակցում են բակալավրիատի կամ դրան համարժեք մակարդակի ծրագրերի (53%) և մագիստրատուրայի կամ դրան համարժեք մակարդակի ծրագրերի (12%): Հարցվողների 14%-ը ներգրավված է եղել միջին մասնագիտական կրթության մեջ՝ միջնակարգ կրթության հենքի վրա, իսկ 19%-ը՝ հիմնական կրթության: Հարցվողների միայն 1%-է ներգրավված գիտության թեկնածուի կամ դրան համարժեք ծրագրերում:

Պատկեր 24:

Ֆորմալ կրթության մակարդակը

«Ո՞րն է Ձեր կրթական ամենից բարձր մակարդակը, որը հաջողությամբ ավարտել եք»: (n=173)



Տվյալներից նաև հետևում է, որ նախորդ 12 ամիսների ընթացքում կրթական ծրագրերում ներգրավվածության մասին նշած հարցվողների 65%-ը դեռ շարունակում էին իրենց կրթական գործունեությունը, իսկ 35%-ը ավարտել է այն: Հարցվողների այս խմբից ոչ մեկը չի նշել կրթությունից դուրս մնալու մասին:

Պատկեր 25:

Ավարտած ֆորմալ կրթություն

«Դուք ավարտե՞լ եք Ձեր ֆորմալ կրթությունը» (n=173)



Ավելին, հետազոտությունը ներառել է հարց ֆորմալ կրթության այն բնագավառի մասին, որի ուղղությամբ հարցվողները մասնագիտանում են: Ստացված տվյալներից հետևում է, որ առավել տարածված բնագավառները/մասնագիտություններն են բիզնեսը, կառավարումը[9] և իրավունքը (19%), կրթությունը (12%), ինչպես նաև հասարակական գիտությունները, լրագրությունը և տեղեկատվությունը (12%), իսկ ավելի քիչ են տարածված ինժեների ու շինարարի մասնագիտությունները (3%), ինչպես նաև գյուղատնտեսությունը, անտառտնեսությունը, ձկնաբուծությունը, անասնաբուժությունը (3%):

Պատկեր 26:

Մասնագիտացման ոլորտը

«Որ՞ն է Ձեր մասնագիտացման ոլորտը» (n=173)



[9] Այս խումբը ներառում է հաշվապահությունն ու հարկային գործը, ֆինանսները, կառավարումն ու վարչարարությունը և այլն՝ ըստ 2013 ISCED Fields of Education Classification:

Ֆորմալ կրթության մեջ ներգրավվածների կեսից պակասը (39%) մասնակցել են հեռավար կազմակերպված ծրագրերի[10]:

Պատկեր 27:

Ֆորմալ կրթության հեռավար կազմակերպումը

«Արդյո՞ք Ձեր ֆորմալ կրթությունը հիմնականում կազմակերպվել էր որպես հեռավար ուսուցում» (n=173)



[10] Հեռավար ուսումնառության միջոցով կրթություն ստացողներից շատերի իրավիճակի վրա հավանաբար ազդել է կորոնավիրուսի համավարակը, որի ընթացքում ֆորմալ կրթության բոլոր տեսակները տեղափոխվել են առցանց հարթակ:

Ըստ աշխատող և միևնույն ժամանակ ֆորմալ կրթության մեջ ներգրավված հարցվողների, վերջիններիս ուսումնառությունը հիմնականում տեղի է ունեցել վճարվող աշխատանքային ժամերի ընթացքում: Հարցվողների գրեթե մեկ երրորդը (23%) հայտնել են, որ իրենք սովորել են միմիայն աշխատանքային ժամերի ընթացքում, 8% հիմնականում սովորել է վճարվող աշխատանքային ժամերի ընթացքում, իսկ 45% այդ ընթացքում չի աշխատել:

Պատկեր 28:

Ֆորմալ կրթությունը վճարվող աշխատանքային ժամերի ընթացքում

«Արդյո՞ք Ձեր ֆորմալ կրթությունը իրականացվել է աշխատանքային ժամերի ընթացքում (ներառյալ վճարովի արձակուրդը կամ առողջության վերականգնումը)» (n=173)



Որպես ֆորմալ կրթությանը չմասնակցելու հիմնական պատճառ նշվել են հետևյալները. Ֆորմալ որակավորման կարիք չունենալը (40%), ֆորմալ կրթության համար ժամանակ չունենալը ընտանեկան պարտականությունների պատճառով (30%), ինչպես նաև այն համոզմունքը, որ իրենց տարիքում ֆորմալ կրթություն ստանալը իմաստ չունի (18%): Առաջին պատճառը ավելի հաճախ նշվել է տղամարդկանց (47%), մայրաքաղաքի բնակիչների (49%), բարձրագույն կրթություն ունեցող հարցվողների (54%), զբաղված հարցվողների (51%) և բարձր որակավորում պահանջող մտավոր աշխատանքով զբաղվողների (64%) կողմից: Երկրորդ պատճառը ավելի հաճախ նշվել է կին հարցվողների (42%), այլ քաղաքների բնակիչների (37%), գործազուրկ հարցվողների (39%) և 25-44 տարեկան հարցվողների կողմից (40%):

Պատկեր 29:

Ֆորմալ կրթությանը չմասնակցելու պատճառները

«Խնդրում ենք նշել, թե արդյոք ստորև նշվածներից որևէ մեկը պատճառ է հանդիսացել, որ չմասնակցեք ֆորմալ կրթական ծրագրերի նախորդ 12 ամիսների ընթացքում»
(բազմակի պատասխաններով հարց, n=2269)



Կրթությանը և վերապատրաստումներին մասնակցության արդյունքների ամփոփում

Նախորդ 12 ամիսների ընթացքում հարցվողների միայն 8%-է ներգրավված եղել ֆորմալ կրթության մեջ, իսկ ներգրավված կրթական ծրագրերի շուրջ կեսը եղել է բակալավրի կամ դրան համարժեք մակարդակի: Ֆորմալ կրթության ամենատարածված բնագավառներից են բիզնեսը, կառավարումը և իրավունքը: Աշխատանքը և կրթությունը համատեղողների կեսից ավելին սովորում են աշխատանքային ժամերի ընթացքում: Ֆորմալ կրթություն չստանալու ամենատարածված պատճառներից են կարիքի բացակայությունը, ժամանակի պակասը և այն համոզմունքը, որ այդ տարիքում իմաստ չունի ֆորմալ կրթություն ստանալը:

Ոչ ֆորմալ կրթություն

Հետազոտության շրջանակներում ոչ ֆորմալ կրթության ներքո դիտարկվել են այն վերապատրաստումները, աշխատարանները/սեմինարները, ուղղորդվող աշխատանքային պրակտիկան, ինչպես նաև մասնավոր պարապմունքները, որոնց մասնակցել են հարցվողները: Ընդհանուր առմամբ, բնակչության 14%-ը նախորդ 12 ամիսների ընթացքում ներգրավված է եղել ոչ ֆորմալ կրթության այս տեսակներից մեկին կամ ավելիին:

Ոչ ֆորմալ ուսումնառության ամենատարածված տեսակը դասընթացներն են (7%), որին հաջորդում են աշխատարանները (5%), վերապատրաստումները աշխատանքի վայրում (3%) և մասնավոր դասերը (3%)[11]: Միջինում հարցվողները մասնակցել են ոչ ֆորմալ կրթության երկու ծրագրի, իսկ դրանց վրա ծախսված ժամերի միջին քանակը մեկ տարվա համար 50 ժամ է:

[11] Այս հաշվարկից հանվել են թրեյնինգների մասնակցության ծայրահեղ շատ կամ քիչ դեպքերը:

Պատկեր 30:

Ոչ ֆորմալ կրթություն

«Վերջին 12 ամիսների ընթացքում աշխատավայրում կամ ազատ ժամանակ հետևյալներից ինչպիսի՞ ոչ ֆորմալ գործունեության եք մասնակցել» (n=356)



Մայրաքաղաքի բնակիչները (22%) ավելի մեծ հավանականությամբ են ներգրավվում ոչ ֆորմալ կրթությանը քան այլ քաղաքների (12%) և գյուղական վայրերի (8%) բնակիչները: Կանայք (16%) և զբաղվածները (21%) ավելի ակտիվ են ոչ ֆորմալ կրթության մեջ՝ տղամարդկանց (12%) և աշխատանք չունեցողների (8%) համեմատ:[12] Կրթության ավելի բարձր մակարդակ ունեցողները և ավելի բարձր որակավորում պահանջող մասնագիտություններով աշխատողները նույնպես ավելի հաճախ են ասել, որ ներգրավված են/եղել ոչ ֆորմալ կրթական ծրագրերի: Հարցմանը մասնակից 18-24 տարեկանների 26% ասել է, որ մասնակցել են ոչ ֆորմալ կրթական առնվազն մեկ ծրագրի՝ 25-44 տարեկանների 16% և 45-64 տարեկանների 7%-ի համեմատ: Հարկ է նշել, որ ոչ ֆորմալ կրթությանը մասնակցության մակարդակը բարձրացել է նաև եկամտի աճի համեմատ: Այսպես, 350 հազար դրամից ավելի ամսական եկամուտ ունեցողների շուրջ կեսը մասնակցել է ոչ ֆորմալ կրթական ծրագրերի՝ 165.000-350.000 դրամ ամսական եկամուտ ունեցողների 18% և մինչև 165 հազար դրամ ամսական եկամուտ ունեցողների 8%-ի համեմատ:

Ժողովրդագրական այս միտումները հիմնականում նույնն են եղել ոչ ֆորմալ կրթության յուրաքանչյուր տեսակի համար: Այդուհանդերձ, միջնակարգ կրթություն ունեցողները (4%) և աշխատանք չունեցողները (4%) ավելի հաճախ են նշել մասնավոր դասերը, իսկ 25-44 տարեկանների շրջանում ավելի մեծ է եղել սեմինարներին և աշխատարաններին մասնակցելու հավանականությունը (6%)՝ այլ տարիքային խմբերի համեմատ:

[12] Ներառված են հետևյալ խմբերը՝ գործազուրկներ, ներկայումս դպրոցում, համալսարանում կամ միջին մասնագիտական կրթության հաստատությունում սովորող, ոչ ակտիվ զբաղված այլ խմբեր:

Հարցվողներին ավելի մանրամասն հարցեր են տրվել ոչ ֆորմալ կրթության չորս տեսակների մասին: Ինչպես հետևում է պատկեր 31-ից, ոչ ֆորմալ կրթության հիմնական տեսակները առնչվել են աշխատանքային գործունեությանը և հիմնականում տեղի են ունեցել աշխատանքային ժամերից դուրս: Ոչ ֆորմալ կրթության ծրագրերի 67% հիմնականում առնչվել է աշխատանքին և 54% տեղի է ունեցել վճարովի աշխատանքային ժամերից դուրս (Պատկեր 31):

Պատկեր 31:

Աշխատանքին առնչվող ուսումնառություն

«Ոչ ֆորմալ կրթական գործունեությունը կապվա՞ծ էր աշխատանքի հետ» (n=600)



Պատկեր 32:

Ոչ ֆորմալ կրթական ծրագրի իրականացման ժամանակահատվածը

«Արդյո՞ք ոչ ֆորմալ դասընթացները տեղի են ունեցել հիմնականում կամ ամբողջությամբ աշխատանքային ժամերի ընթացքում (ներառյալ վճարովի արձակուրդը կամ հիվանդությունը)» (n=600)



Այն դեպքերում, երբ ոչ ֆորմալ կրթական ծրագրերը վճարովի են եղել, դրանց համար հիմնականում վճարել են հարցվողները: Գործատուները վճարել են ոչ ֆորմալ կրթական ծրագրերից միայն 25%-ի համար:

Պատկեր 33:

Ով է վճարել ոչ ֆորմալ կրթական ծրագրի համար

«Ձեր գործատուն մասամբ, թե՞ ամբողջությամբ է վճարել ոչ ֆորմալ կրթական գործունեության համար» (n=600)



Հարցվողներին առաջարկվել է լրացուցիչ մանրամասներ տրամադրել երկու ոչ ֆորմալ կրթական ծրագրի մասին, որին իրենք մասնակցել են: Պարզվել է, որ մասնակցության հիմնական պատճառը եղել է աշխատանքի կատարողականի բարելավումը (44%), առօրյա կյանքի համար օգտակար գիտելիք և հմտություններ ստանալը (33%), կարիերայի հեռանկարը բարելավելը (32%) և հետաքրքրություն ներկայացնող թեմայի մասին գիտելիքների և հմտությունների բարելավումը (28%):

Պատկեր 34:

Ոչ ֆորմալ կրթությանը մասնակցության պատճառները

«Որո՞նք էին ոչ ֆորմալ ուսումնական գործունեությանը մասնակցելու պատճառները» (n=355)



Ինչ վերաբերում է ոչ ֆորմալ կրթությանը չմասնակցելու պատճառներին, ապա դրանցից առաջնայինը կրթության կամ թրեյնինգի կարիք չունենալն է (32%), ընտանեկան պարտականությունների բերումով ժամանակ չունենալը (32%) և այն համոզմունքը, որ տարիքից ելնելով ոչ ֆորմալ կրթությունն անհրաժեշտ չէ (17%):

Պատկեր 35:

Ոչ ֆորմալ կրթությանը չմասնակցելու պատճառները

Որո՞նք են վերջին 12 ամիսների ընթացքում ոչ ֆորմալ դասընթացների չմասնակցելու պատճառները (բազմակի պատասխաններով հարց, n=2084)



Ոչ ֆորմալ կրթությանը չմասնակցելու պատճառները տարբեր են ըստ տարբեր սոցիալական և ժողովրդագրական խմբերի: Երևանի բնակիչները ավելի շատ են հակված եղել նշելու, որ իրենք ոչ ֆորմալ կրթության կարիք չունեն (39%)՝ այլ քաղաքների և գյուղերի բնակիչների համեմատ (29%): Երևանի բնակիչները նաև ավելի հաճախ են ընտանեկան պարտականությունները նշել որպես խոչընդոտ (24%): Կանայք ավելի հակված են եղել ասելու, որ իրենք դասընթացի կարիք չեն զգում (40%), ինչպես նաև ավելի քիչ են մատնանշել ժամանակի սղությունը՝ ընտանեկան պարտականությունների պատճառով (19%): Որքան բարձր է կրթության մակարդակը, այնքան ավելի բարձր հավանականությամբ են հարցվողները խոսել հետագա դասընթացի կարիք չունենալու մասին, բայց և ավելի քիչ են նշել տարիքը կամ ընտանեկան պարտականությունները որպես ոչ ֆորմալ կրթական ծրագրերին չմասնակցելու պատճառ: Եվ իհարկե, զարմանալի չէ, որ որքան բարձր է եղել հարցվողների տարիքը, այնքան ավելի մեծ է եղել հավանականությունը, որ հարցվողները կնշեն կրթությունը շարունակելու կարիք չունենալու մասին (36%)՝ ասելով, որ իրենց տարիքում հետագա ուսումնառությունը անիմաստ են համարում (37%): 25-44 տարեկանների 44% նշել է, որ իրենց հետագա կրթությանը խոչընդոտում են ընտանեկան պարտականությունները: Զբաղվածները ավելի շատ են հակված եղել նշելու, որ իրենք հետագա վերապատրաստման/դասընթացի կարիք (41%) կամ դրա համար ժամանակ (16%) չունեն, կամ որ այն անհրաժեշտ չէ իրենց աշխատանքի համար (17%): Ինչ վերաբերում է աշխատանք չունեցողներին, նրանք ավելի հակված են եղել որպես խոչընդոտ նշելու ընտանեկան պարտականությունները (38%) և տարիքը (20%):

Ոչ ֆորմալ կրթական ծրագրերի 63%-ի արդյունքում չի տրվել վկայական: Ըստ հարցվողների, միայն դեպքերի 31% պարագայում է, որ նման պահանջ է դրվել գործատուի, մասնագիտական կառույցի կողմից կամ համապատասխան օրենսդրությամբ:

Պատկեր 36:

Ոչ ֆորմալ կրթության համար վկայական ստանալը

«Արդյո՞ք ոչ ֆորմալ կրթական գործունեությունը ենթադրում էր վկայական» (n=490)



Ինչ վերաբերում է դասընթացների համար վճարմանը, ապա դեպքերի շուրջ կեսի պարագայում ոչ ֆորմալ կրթական ծրագիրը վճարովի չի եղել (39%), իսկ նման վճար լինելու դեպքում այն հիմնականում կատարվել է մասնակցի կողմից (24%):

Պատկեր 37:

Ոչ ֆորմալ կրթության ծախսերը

«Ձեր ոչ ֆորմալ կրթական ծրագրի/դասընթացի ընթացքում նշվածներից ո՞րն է լավագույնս ներկայացնում ուսման, գրանցման, քննության և գրքերի կամ տեխնիկական ուսումնական միջոցների վճարման ձևերը»



Այն դեպքերում, երբ ոչ ֆորմալ կրթական ծրագրի համար վճարել է մեկ ուրիշը, դա հիմնականում եղել է գործատուն կամ ապագա գործատուն (76%) և միջին արժեքը կազմել է 100 հազար դրամ:

Պատկեր 38:

Ոչ ֆորմալ կրթության ծախսերը

«Ձեր առաջին ոչ ֆորմալ գործունեության ընթացքում նշված սուբյեկտներից ո՞ր մեկն է մասնակիորեն կամ ամբողջությամբ վճարել ուսման, գրանցման, քննության և գրքերի կամ տեխնիկական ուսումնական միջոցների համար» (n=80)



Ըստ հարցման մասնակիցների, նրանք մինչև 50 ժամ են տրամադրել ոչ ֆորմալ կրթության երկու պատահականորեն ընտրված ծրագրերին հետևյալ բնագավառում՝ ծառայություններ, կրթություն, բիզնես, կառավարում, իրավունք, այլ (Պատկեր 39):

Պատկեր 39:

Ուսումնառության բնագավառը

«Ո՞րն է Ձեր ոչ ֆորմալ ուսուցման գործունեության ոլորտը» (n=490)



Ըստ մասնակիցների դասընթացները նրանց օգնել են մի քանի ձևով: Այսպես օրինակ, ոչ ֆորմալ կրթության ծրագրերին մասնակցելը օգնել է բարելավել աշխատանքի կատարողականը (24%), օգնել է անձնական հարցերում (23%), ինչպես նաև առաջխաղացում է ապահովել աշխատավայրում (19%): Ընդհանուր առմամբ, մասնակիցների 12%-ը չի նշել ոչ ֆորմալ կրթության որևէ արդյունք, իսկ մի մեծ խումբ էլ (41%) դժվարացել է պատասխանել այս հարցին:

Պատկեր 40:

Ոչ ֆորմալ կրթության արդյունքները

«Արդյո՞ք ոչ ֆորմալ ուսուցման գործունեության արդյունքում ձեռք բերված նոր հմտությունները/գիտելիքներն օգնե՞լ են Ձեզ հետևյալ առումներով» (n=490)



Ոչ ֆորմալ կրթությանը մասնակցության ամփոփում

Հարցվողների շուրջ 14%-ը նախորդ 12 ամիսների ընթացքում ներգրավված է եղել ոչ ֆորմալ կրթությանը: Դասընթացները ոչ ֆորմալ կրթության ամենատարածված տեսակն են (7%), որին հաջորդում են աշխատարանները (5%): Կանայք և ավելի բարձր որակավորում պահանջող մասնագիտություններով աշխատողները ավելի շատ են հակված եղել մասնակցել ոչ ֆորմալ կրթական ծրագրերի՝ տղամարդկանց և աշխատանք չունեցողների համեմատ: Այն ծրագրերի մեծամասնությունը, որոնց մասնակցել են հարցվողները, կապ են ունեցել աշխատանքի հետ (67%) և տեղի են ունեցել աշխատանքային ժամերից դուրս (45%): Ոչ ֆորմալ կրթությանը մասնակցելու հիմական պատճառների թվում են՝ աշխատանքի կատարողականի բարելավումը (44%), առօրյա կյանքի համար գիտելիք և հմտություններ ստանալը (33%) և կարիերայի հեռանկարների բարելավումը (32%): Ոչ ֆորմալ կրթական ծրագրերի մեկ երրորդից ավելին (39%) անվճար են եղել, իսկ մասացած մասի համար վճարել է հարցվողը կամ ինչ-որ մեկ ուրիշը (43%)՝ ավելի հաճախ գործատուն (76%): Հարցվողների շուրջ կեսը նշել է ոչ ֆորմալ կրթական փորձառության դրական արդյունքների մասին, այդ թվում՝ աշխատանքի ավելի լավ կատարողական (24%) և անձնական դրդապատճառներ (23%), այդ թվում՝ նոր մարդկանց հանդիպելը կամ ընդհանուր թեմաների վերաբերյալ գիտելիքի/հտությունների թարմացումը:

Ինֆորմալ ուսումնառություն

Տվյալների համաձայն հարցվողների 75%-ը ներգրավված է եղել ինֆորմալ ուսումնառությանը վերջին 12 ամսվա ընթացում: Ինֆորմալ կրթությունը վերաբերում է ոչ կառուցվածքային և չկազմակերպված ուսումնառությանը, որը բարելավում է գիտելիքներ կամ հմտություններ՝ ստացվելով այնպիսի տարբեր աղբյուրներից, ինչպիսիք են աշխատանքը կամ ժամանցը:

Ընդհանուր առմամբ նախորդ 12 ամիսների ընթացքում երիտասարդները ավելի մեծ հավանականությամբ են ներգրավված եղել ինֆորմալ ուսումնառությանը: Այսպես, 18-24 տարեկանների 87%, 25-44 տարեկանների 80%-ը 45-65 տարեկանների 65%-ը նշել է, որ իրենք ներգրավված են եղել ինֆորմալ ուսումնառությանը: Ինֆորմալ ուսումնառությանը ներգրավվածությունը ավելի բարձր է եղել կրթության մակարդակի բարձրացման պարագայում: Այսպես, բարձրագույն կրթություն ունեցողների 88%-ն է ներգրավվել ինֆորմալ ուսումնառությանը՝ մասնագիտական կրթություն ունեցողների 77%-ի և միջնակարգ կրթություն ունեցողների

68%-ի համեմատ: Բարձր որակավորում պահանջող մտավոր և ֆիզիկական/տեխնիկական աշխատանքով զբաղվողները նույնպես ավելի մեծ հավանականությամբ են ներգրավվել ինֆորմալ ուսումնառությանը (համապատասխանաբար 90% և 76%)՝ ցածր որակավորում ունեցող այդ երկու խմբերի աշխատողների համեմատ (74% և 67%):

Պատկեր 41:

Ներգրավվածությունը ինֆորմալ կրթությանը

«Վերջին 12 ամիսների ընթացքում միտումնավոր փորձե՞լ եք որևէ բան սովորել աշխատավայրում կամ ձեր ազատ ժամանակում՝ բարելավելու ձեր գիտելիքները կամ հմտությունները» (n=2440)[13]



[13] Կառուցված փոփոխական, այն է՝ մասնակցությունը ինֆորմալ ուսումնառության առնվազն մեկ տեսակի:

Ընդհանուր առմամբ, համակարգիչները եղել են (59%) ինֆորմալ ուսումնառության հիմնական միջոցը, որին հաջորդել է ընտանիքի անդամներից, ընկերներից կամ գործընկերներից սովորելը (53%), հեռուստատեսությունը, ռադիոն կամ տեսանյութերը (41%), տպագիր նյութերը, այն է՝ գրքերը (37%), թանգարաններ, պատմական, բնական կամ արդյունաբերական տեսարժան վայրեր այցերը (13%), ինչպես նաև գրադարանները (12%):

Պատկեր 42:

Ինֆորմալ կրթության տեսակը

«Վերջին 12 ամսվա ընթացքում աշխատավայրում կամ ազատ ժամանակ փորձե՞լ եք որևէ բան սովորել զարգացնելու համար Ձեր գիտելիքները կամ հմտությունները հետևյալ միջոցներից որևէ մեկով» (n=2440)



Ինֆորմալ ուսումնառության առանձին տեսակները դիտարկելիս պարզ է դառնում, որ վերջին 12 տարում կանայք ավելի շատ են ներգրավվել ինֆորմալ ուսումնառության բոլոր մեթոդներին՝ տղամարդկանց համեմատ: Չնայած նրան, որ կանանց ներգրավվածությունը բարձր է եղել ինֆորմալ ուսումնառության ամեն առանձին մեթոդի դեպքում, այդ տարբերությունները հատկապես նկատելի են տպագիր նյութերի օգտագործման (43%՝ 30%-ի համեմատ) և հեռուստատեսությունից, ռադիոյից կամ տեսանյութերից սովորելու պարագայում (44%՝ 37%-ի համեմատ):

Ընդհանուր առմամբ, վերջին 12 ամիսների ընթացքում ինֆորմալ ուսումնառությանը ներգրավվածությունը նվազել է տարիքի բարձրացմանը զուգընթաց: Հարցմանը մասնակցած 18-24 տարեկան երիտասարդները ավելի հաճախ են ներգրավվել ինֆորմալ ուսումնառության քան տարիքով ավելի բարձր խմբերը: Բացառություն է կազմել հեռուստատեսությունից, ռադիոյից կամ տեսանյութերից սովորելը, որը մոտավորապես նույն չափով է կիրառվել տարիքային բոլոր խմբերի կողմից: Հարցմանը մասնակցած 18-24 և 25-44 տարեկանների խմբերի համար ինֆորմալ ուսումնառության ամենատարածված միջոցը համակարգիչներն են (համապատասխանաբար 79% և 65%), իսկ 45-64 տարեկանների խմբում ինֆորմալ ուսումնառության ամենատարածված միջոցն է ընտանիքի անդամներից, ընկերներից կամ գործընկերներից սովորելը (44%):

Պատկեր 43:

Ինֆորմալ ուսումնառության տեսակները ըստ տարիքի

«Վերջին 12 ամսվա ընթացքում աշխատավայրում կամ ազատ ժամանակ փորձե՞լ եք որևէ բան սովորել զարգացնելու համար Ձեր գիտելիքները կամ հմտությունները հետևյալ միջոցներից որևէ մեկով» (n=2440)



Քաղաքային բնակավայրերից հարցվողները ավելի հակված են եղել ներգրավվելու ինֆորմալ ուսումնառության տարբեր տեսակներին՝ գյուղաբնակների և մայրաքաղաքի բնակիչների համեմատ: Համակարգիչների օգտագործումը ինֆորմալ ուսումնառության նպատակներով նույնպես ավելի տարածված է եղել մայրաքաղաքի կամ քաղաքների բնակիչների շրջանում (60% և 67%, համապատասխանաբար)՝ գյուղաբնակների համեմատ (50%): Ինչ վերաբերում է գյուղական բնակավայրերին, ապա ինֆորմալ ուսումնառության համար համակարգչի օգտագործումը և ընտանիքի անդամներից, ընկերներից կամ գործընկերներից սովորելը հավասարաչափ են նշվել (50%):

Պատկեր 44:

Ինֆորմալ ուսումնառության տեսակները ըստ բնակավայրի

«Վերջին 12 ամսվա ընթացքում աշխատավայրում կամ ազատ ժամանակ փորձե՞լ եք որևէ բան սովորել զարգացնելու համար Ձեր գիտելիքները կամ հմտությունները հետևյալ միջոցներից որևէ մեկով» (n=2440)



Ինֆորմալ ուսումնառությանը ներգրավվածությունը աճել է կրթական ավելի բարձր մակարդակի պարագայում: Դա հատկապես արտահայտվել է տպագիր նյութեր ընթերցելու և համակարգչի օգտագործման պարագայում, ինչպես ներկայացված է ստորև Պատկեր 45-ում: Նույնը վերաբերում է նաև մասնագիտական ավելի բարձր որակավորումներին:

Պատկեր 45:

Ինֆորմալ ուսումնառության տեսակը ըստ կրթական մակարդակի

«Վերջին 12 ամսվա ընթացքում աշխատավայրում կամ ազատ ժամանակ փորձե՞լ եք որևէ բան սովորել զարգացնելու համար Ձեր գիտելիքները կամ հմտությունները հետևյալ միջոցներից որևէ մեկով» (n=2440)



Ինֆորմալ ուսումնառությանը ներգրավվածության արդյունքների ամփոփում

Վերջին 12 ամսվա ընթացքում հարցվողների մեծամասնությունը ներգրավված է եղել ինֆորմալ ուսումնառության մեջ: Կանանց ներգրավվածությունը եղել է ավելի բարձր տղամարդկանց համեմատ, հիմնականում ընթերցանության միջոցով: Տարիքի բարձրացմանը զուգընթաց իջել է ինֆորմալ ուսումնառությանը ներգրավվածության աստիճանը: Ընդհանուր առմամբ, ավելի բարձր կրթական մակարդակ և մասնագիտական որակավորում ունեցողների ներգրավվածությունը ինֆորմալ ուսումնառությանը ավելի բարձր է: Ինֆորմալ ուսումնառության նպատակով կիրառվող ամենատարածված միջոցը համակարգիչն է (58%), որին անմիջապես հետևում է ընտանիքից, ընկերներից կամ գործընկերներից սովորելը (53%): Գիդով շրջայցերը կամ գրադարաններ այցերը ինֆորմալ ուսումնառության ամենաքիչ տարածված տեսակներն են: Ինֆորմալ ուսումնառության նպատակով համակարգիչների օգտագործումը, ընտանիքից, ընկերներից կամ գործընկերներից, ինչպես նաև տպագիր նյութերից սովորելը նշանակալի նվազում է տարիքին զուգահեռ: Այդուհանդերձ, հեռուստացույցից, ռադիոյից կամ տեսանյութերից սովորելը համաչափ է նշվել բոլոր տարիքային խմբերի կողմից:

Մեծահասակների կրթության ընկալումները

Հետազոտության շրջանակներում խորությամբ ուսումնասիրվել են մեծահասակների կրթության վերաբերյալ ընկալումները, այդ թվում՝ 30 տարեկանից հետո սովորելու դժվարությունները, մեծահասակների կրթության նպատակը, մեծահասակների կրթության տարբեր բաղադրիչների համար պատասխանատվությունը, ուսումնառության գերադասելի ձևերը, ինչպես նաև աշխատանք գտնելու վրա ազդող գործոնների մասին պատկերացումները:

Հարցումն անդրադարձել է 30 տարեկանից հետո սովորելու դժվարությունների մասին մարդկանց ընկալումներին: Չնայած հարցվողների կեսից ավելին (57%) համաձայն չեն այն պնդման հետ, որ սովորելը դժվար է 30 տարեկանից հետո, մեծամասնությունը (71%) կարծում է, որ մինչ 30 տարեկան մարդիկ ավելի հեշտությամբ են նոր հմտություններ ձեռք բերում: Հարցվողների զգալի մասը (62%) նաև կարծում է, որ մինչ 30 տարեկան մարդիկ ավելի հետաքրքրված են սովորելով՝ իրենցից մեծերի համեմատ: Բացի այդ, հարցվողների 68% համաձայն է, որ 30 տարեկանից հետո մարդիկ շատ այլ անելիքներ ունեն և այդ պատճառով ի վիճակի չեն շարունակել կրթությունը:[14]

Պատկեր 46:

30-ից հետո սովորելու նկատմամբ վերաբերմունք

«Նշեք, թե որքանո՞վ եք համաձայն/համաձայն չեք հետևյալ դատողությունների հետ» (n=2440)



[14] Նախնական սանդղակում ներառված է եղել 5 պատասխան, որոնք այնուհետև միավորվել են 3-միավորանոց սանդղակում, այն է՝ Համաձայն եմ («լիովին համաձայն եմ» և «հիմնականում համաձայն եմ»), Ոչ համաձայն եմ, ոչ համաձայն չեմ, համաձայն չեմ («հիմնականում համաձայն չեմ» և «ընդհանրապես համաձայն չեմ»):

Տվյալներն ըստ սեռի վերլուծելիս պարզ է դառնում, որ առկա են որոշակի տարբերություններ 30 տարեկանից հետո սովորելու ընկալումներում: Այսպես օրինակ, վերոնշյալ պնդմանը համաձայնել են ավելի շատ թվով տղամարդ քան կին հարցվողներ: Տղամարդիկ ավելի հակված են մտածել, որ 30 տարեկանից հետո սովորելը դժվար է (տղամարդկանց 40%-ը՝ կանանց 30%-ի համեմատ) և որ 30 տարեկանից հետո մարդիկ չափազանց զբաղված են կրթությունը շարունակելու համար (տղամարդկանց 74%-ը՝ կանանց 63%-ի համեմատ):

Պատկեր 47:

30-ից հետո սովորելու նկատմամբ վերաբերմունք ըստ սեռի

«Նշեք, թե որքանո՞վ եք համաձայն/համաձայն չեք հետևյալ դատողությունների հետ» (n=2440)



Կրթական մակարդակը նույնպես ազդում է մեծահասակների կրթության վերաբերյալ ընկալումների վրա: Բարձրագույն կրթություն ունեցողները ավելի քիչ էին հակված համաձայնել համապատասխան պնդումների հետ՝ միջնակարգ կամ միջին մասնագիտական կրթություն ունեցողների համեմատ: Տարբերությունն առանձնապես զգալի է 30 տարեկանից երիտասարդների շրջանում սովորելու նկատմամբ հետաքրքրություն ունենալու վերաբերյալ: Այսպես, միջնակարգ կրթություն ունեցողների 68%-ը համաձայն է այդ պնդման հետ, իսկ բարձրագույն կրթություն ունեցողների շրջանում համապատասխան ցուցանիշը 48%-ն է: Տարբերությունը նկատելի է նաև միջնակարգ և միջին մասնագիտական կրթություն ունեցողների միջև այն պնդման առնչությամբ, համաձայն որի 30 տարեկանից բարձր մարդիկ շատ այլ անելիքներ ունեն և ի վիճակի չեն շարունակել կրթությունը (միջնակարգ կրթություն ունեցողների 73%-ը՝ միջին մասնագիտական կրթություն ունեցողների 65%-ի համեմատ): Հետևաբար, այն հարցվողները, որոնց մասնագիտական որակավորումը կապված է կրթական ավելի բարձր մակարդակի հետ, առավել հակված են չհամաձայնել համապատասխան պնդումների հետ՝ ավելի ցածր որակավորում պահանջող աշխատանք ունեցողների համեմատ:

Պատկեր 48:

30-ից հետո սովորելու նկատմամբ վերաբերմունք ըստ կրթական մակարդակի

«Նշեք, թե որքանո՞վ եք համաձայն/համաձայն չեք հետևյալ դատողությունների հետ» (n=2440)



Զարմանալի չէ, որ վերջին 12 ամսում ոչ ֆորմալ կրթությանը մասնակցածները նույնպես ավելի հակված են չհամաձայնելու համապատասխան պնդումների հետ՝ ոչ ֆորմալ կրթական ծրագրերին չմասնակցածների համեմատ:

Տվյալները նաև արտացոլում են հարցվողների տեսակետերը մեծահասակների կրթության ծրագրերի տարբեր ասպեկտների վերաբերյալ: Այսպես օրինակ, հարցվողների 38%-ը կարծում է, որ նման ծրագրերը առավել օգտակար են այնպիսի մասնագիտությունների համար, ինչպիսիք են ջրմուղագործները, էլեկտրատեխնիկները, շինարարները և այլն: Ընդհանուր առմամբ, 22%-ը կարծում է, որ միայն ավելի ապահովված մարդիկ կարող են իրենց թույլ տալ մասնակցել ֆորմալ կամ ոչ ֆորմալ վերապատրաստումների կամ մեծահասակների կրթության ծրագրերի: Բացի այդ, հարցվողների 31%-ը համաձայն է, որ միայն տարբեր ՀԿ-ներում ներգրավվածներն ունեն մեծահասակների կրթության ծրագրերին մասնակցելու հնարավորություն: Եվ վերջապես, հարցվողների 59%-էլ կարծում է, որ մեծահասակների կրթությունը չափից դուրս շատ ազատ ժամանակ ունեցողների համար է:[15]

Պատկեր 49:

Մեծահասակների կրթության նկատմամբ վերաբերմունքը

Նշեք, թե որքանո՞վ եք համաձայն/համաձայն չեք հետևյալ դատողությունների հետ» (n=2440)



[15] Նախնական սանդղակում ներառված է եղել 5 պատասխան, որոնք այնուհետև միավորվել են 3-միավորանոց սանդղակում, այն է՝ Համաձայն եմ («լիովին համաձայն եմ» և «հիմնականում համաձայն եմ»), Ոչ համաձայն եմ, ոչ համաձայն չեմ, համաձայն չեմ («հիմնականում համաձայն չեմ» և «ընդհանրապես համաձայն չեմ»):

Ըստ տարիքի վերլուծությունից հետևում է, որ 18-24 տարեկանների կարծիքները մեծահասակների կրթության վերաբերյալ տարբերվում են 25-64 տարեկանների կարծիքներից՝ վերոնշյալ պնդումներին համաձայնելու տեսանկյունից: Ընդհանուր առմամբ, ավելի երիտասարդները հակված են ավելի քիչ համաձայնելու այդ պնդումների հետ՝ 24 տարեկանից բարձր տարիքային խմբի համեմատ: Այսպես օրինակ, 18-24 տարեկանների 33%-ն է համաձայն, որ մեծահասակների կրթությունը օգտակար է ցածր որակավորում պահանջող մասնագիտությունների համար: Նման կարծիք ունեն 24 տարեկանից բարձր տարիքային խմբի հարցվողների 38%-ը: Բացի այդ, 18-24 տարեկան խմբի 26%-ն է կարծում, որ միայն ՀԿ-երում ներգրավվածներն ունեն մեծահասակների կրթության հնարավորություններ՝ 24 տարեկանից բարձր խմբի 32%-ի համաձայն: Եվ ի վերջո, ավելի երիտասարդների 45%-ն է համաձայն, որ մեծահասակների կրթությունը ազատ ժամանակ ունեցողների համար է՝ 24 տարեկանից բարձր տարիքային խմբի 60%-ի համեմատ:

Պատկեր 50:

Մեծահասակների կրթության նկատմամբ վերաբերմունքը ըստ տարիքի

«Նշեք, թե որքանո՞վ եք համաձայն/անհամաձայն հետևյալ դատողությունների հետ» (n=2440)



Ընդհանուր առմամբ կրթությունը դրականորեն է փոխկապակցված առաջարկվող պնդումներին չհամաձայնելու հետ: Որքան ավելի բարձր է կրթական մակարդակը, այնքան ավելի քիչ են հարցվողները համաձայնում համապատասխան պնդումների հետ: Հարկ է նշել, որ միջին մասնագիտական կրթություն ունեցողները հիմնականում համաձայն են (47%), որ մեծահասակների կրթությունն օգտակար է այնպիսի մասնագիտությունների համար, ինչպիսիք են ջրմուղագործությունը, էլեկտրատեխնիկան, շինարարությունը և այլն:

Պատկեր 51:

Մեծահասակների կրթության նկատմամբ վերաբերմունքը ըստ կրթական մակարդակի

«Նշեք, թե որքանո՞վ եք համաձայն/համաձայն չեք հետևյալ դատողությունների հետ» (n=2440)



Այս պնդումների դեպքում նույնպես, նրանք ովքեր մասնակցել են ինֆորմալ կամ ոչ ֆորմալ կրթական ծրագրերի վերջին 12 ամսվա ընթացքում, ինչպես նաև ավելի բարձր որակավորում պահանջող մասնագիտություն ունեցողները ավելի շատ են հակված չհամաձայնելու պնդումների հետ քան մյուս խմբերը:

Ինչ վերաբերում է մեծահասակների կրթության հնարավորություններին առնչվող պատասխանատվության շրջանակին, հարցվողները հակված են մտածել, որ պետությունն է պատասխանատու մեծահասակների կրթության համար: Հարցվողների մեծամասնությունը պետությունն է նշել որպես կրթական կարիքների վերհանման (64%), կազմակերպման (63%), ֆինանսավորման (73%), հավաստագրման (67%), ինչպես նաև նման դասընթացներից հետո աշխատանքի տեղավորման պատասխանատու (58%): Որպես մեծահասակների կրթության կազմակերպման և ֆինանսավորման համար պատասխանատու հաջորդ խումբ հարցվողները ավելի հաճախ նշել են գործատուներին :[16]

Պատկեր 52:

Մեծահասակների կրթության համար պատասխանատու դերակատարներ

«Ստորև թվարկվածներից ո՞վ պետք է առավել մեծ պատասխանատվություն կրի մեծահասակների կրթության հետևյալ հնարավորությունների համար» (n=2440



[16] Հարցվողները որպես հավաստագրման և աշխատանքի տեղավորման համար հիմնական պատասխանատու «Այլ» պատասխանի ներքո նշել են «դասընթաց տրամադրողին»:

Հարցման շրջանակներում նաև հարց է տրվել այն մասին, թե ուսումնական/կրթական որ տեսակի գործունեությունն է առավել արդյունավետ հետևյալ նպատակներին հասնելու համար. նորը սովորել, ստանալ ավելի լավ աշխատանք գտնելու ավելի լավ հնարավորություն, զարգացնել գործնական հմտություններ, ապահովել աշխատանքի կայունությունը, աշխատանքի առաջխաղացում կամ աշխատավարձի բարձրացում ունենալ, ստանալ ճանաչված որակավորում, անձնական աճ ունենալ, ինչպես նաև ընդլայնել մասնագիտական ցանցը: Ոչ ֆորմալ կրթությունը գնահատվել է որպես առավել արդյունավետ գործնական հմտություններ ստանալու (49%) և մարդկանց հանդիպելու/մասնագիտական ցանցերը ընդլայնելու (44%) տեսանկյունից: Գրեթե բոլոր մյուս նպատակների համար ոչ ֆորմալ կրթությունը զբաղեցրել է երկրորդ տեղը՝ ֆորմալ կրթությունից հետո, այդ թվում՝ նորը սովորելու (48% ֆորմալ, 31%՝ ոչ ֆորմալ), ավելի լավ աշխատանք գտնելու ավելի լավ հնարավորության (57% և 29% համապատասխանաբար), աշխատանքի կայուն ապահովման (60% և 24% համապատասխանաբար), աշխատանքի առաջխաղացման կամ աշխատավարձի բարձրացման (51% ֆորմալ, 30% ոչ ֆորմալ), ինչպես նաև ճանաչված որակավորում ստանալու (56% և 30% համապատասխանաբար) համար: Ինֆորմալ կրթությունը առաջնային է համարվել միայն անձնային զարգացման/աճի տեսանկյունից (58%), որին հաջորդել է ֆորմալ կրթությունը 22%-ով և ոչ ֆորմալը՝ 18%:

Պատկեր 53:

Մեծահասակների կրթության նախընտրությունների առաջնայնություններ

«Ուսուցման ո՞ր ձևն է լավագույնս նպաստում հետևյալին» (n=2440)



Հարցվողներին առաջարկվել է նաև 1-5 սանդղակով գնահատել, թե ֆորմալ, ոչ ֆորմալ, ինֆորմալ, ինքնաուղղորդվող, խառը տիպի, ինչպես նաև դասընթացների (ոչ ֆորմալ կրթության այլ տեսակների) կրթական գործունեության տեսակներից որն է իրենց համար գերադասելի ուսումնառության տեսակը: Արդյունքներից հետևում է, որ ամենագերադասելի կրթական գործունեության տեսակը ֆորմալն է: Ավելի քիչ հարցվողներ են նախապատվությունը տվել ինքնաուղղորդվող ուսումնառությանը, դասընթացներին կամ խառը տիպի կրթական գործունեությանը: Ինչ վերաբերում է առաջին ընտրությանը, ապա գյուղական բնակավայրերից հարցվողները ավելի շատ են նշել ֆորմալ կրթությունը (59%)՝ քաղաքային բնակավայրերից հարցվողների (52%) կամ մայրաքաղաքից հարցվողների (50%) համեմատ, որտեղ ոչ ֆորմալ կրթությունն առաջին տեղում էր:

Պատկեր 54:

Կրթական գործունեության գերադասելի տեսակը

«Դասակարգեք հետևյալ տարբերակները ըստ Ձեր նախընտրած սովորելու ռեժիմի» (n=2440)



Մարդիկ տարբեր կարծիքներ են հայտնել Հայաստանում աշխատանք գտնելուն նպաստող տարբեր գործոնների կարևորության վերաբերյալ: Ամենից հաճախ նշված երեք գործոնների շարքում են կրթությունը (58%), աշխատասիրությունը (37%), ինչպես նաև մասնագիտական կարողությունները և/կամ աշխատանքային փորձը (37%):

Պատկեր 55:

Լավ աշխատանք գտնելուն նպաստող կարևոր գործոնները

«Ըստ Ձեզ, նշվածներից ո՞րն է առավել կարևոր գործոն Հայաստանում լավ աշխատանք ունենալու համար» (n=2440)



Մեծահասակների կրթության ընկալումների վերաբերյալ արդյունքների ամփոփում

Ընդհանուր առմամբ, հարցվողների կեսից ավելին համաձայն է, որ 30 տարեկանից բարձր տարիքային խումբը սովորելու հետ կապված դժվարություններ ունի, ինչպես նաև հետաքրքրության և ժամանակի պակաս: Հատկանշական է, որ կանայք, նախորդ տարվա ընթացքում ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթական ծրագերին մասնակցածները, բարձրագույն կրթություն և մասնագիտական բարձր որակավորմամբ աշխատանք ունեցողները առավել հակված են եղել չհամաձայնել այս պնդմանը: Հարցվողների մեծամասնությունը նաև համաձայնել է, որ մեծահասակների կրթությունը շատ ազատ ժամանակ ունեցողների համար է (59%): Հարցվողների 22%-ի կարծիքով մեծահասակների կրթությունը կախված է ֆինանսական միջոցների առկայությունից, իսկ մեկ երրորդն էլ համոզված է, որ մեծահասակների կրթությանը մասնակցելու ավելի մեծ հնարավորություններ ունեն տեխնիկական/ֆիզիկական աշխատանք ունեցողները, ինչպես նաև ՀԿ համայնքում ներգրավվածները: Ավելի երիտասարդները, այն է՝ 18-24 տարեկանները և բարձրագույն կրթություն ունեցողները ավելի քիչ են հակված համաձայնելու այս պնդմանը: Հարցվողների կեսից ավելին նշել է, որ պետությունն է պատասխանատու կրթական ամբողջ շրջափուլի համար՝ կրթական կարիքների գնահատումից մինչև աշխատանքի տեղավորում: Հարցվողների գրեթե կեսը կարծում է, որ ֆորմալ կրթությունը ավելի արդյունավետ է նոր բաներ սովորելու, ավելի լավ աշխատանքի հնարավորության, աշխատանքի կայունության և վարձատրության, ինչպես նաև ճանաչված որակավորում ստանալու տեսանկյունից: Սրանցից յուրաքանչյուրի համար հաջորդը ոչ ֆորմալ կրթությունն է, որը ըստ հարցվողների առավել արդյունավետ մեթոդ է գործնական հմտությունների ձևավորման (49%), ինչպես նաև նոր մարդկանց հանդիպելու համար (44%): Ինֆորմալ կրթությունը համարվել է ամենաարդյունավետը անձնական զարգացման համար: Հարցվողների ուսումնառության գերադասելի տարբերակը ֆորմալ կրթությունն է, որին հաջորդում են ինքնաուղորդվող և ոչ ֆորմալ ուսումնառությունը: Կրթությունը, աշխատասիրությունը, ինչպես նաև մասնագիտական կարողությունները նշվել են որպես կարևորագույն գործոններ աշխատանք գտնելու համար:

Հեռավար ուսումնառությունը ԿՈՎԻԴ-19-ի ընթացքում

Քանի որ հետազոտությունն անց է կացվել ԿՈՎԻԴ-19 համավարակի ընթացքում, հարցեր են ներառվել նաև հեռավար ուսումնառության, դրան առնչվող փորձառության և վերաբերմունքի մասին:

Ըստ հարցվողների 12%-ի ԿՈՎԻԴ-19-ի սկսելուց ի վեր նրանք մասնակցել են հեռավար ուսուցման/ուսումնառության: Ավելին, մայրաքաղաքի բնակիչները (17%) ավելի մեծ հավանականությամբ են մասնակցել հեռավար ուսուցմանը՝ գյուղաբնակների համեմատ: Հեռավար ուսուցման/ուսումնառության ցանկացած տեսակին մանակցությունը սերտորեն կապված է նաև տարիքի և մասնագիտության/աշխատանքի հետ: Բացի այդ, 18-24 տարեկան հարցվողների գրեթե կեսը (47%) մասնակցել է հեռավար ուսուցման՝ ավելի բարձր տարիքի զգալի փոքր թվի համեմատ (25-44 տարիքային խումբ՝ 9%, 45-64 տարիքային խումբ՝ 4%): Առավել բարձր որակավորում պահանջող մասնագիտությամբ աշխատողները ավելի շատ են ներգրավվել հեռավար կրթությանը՝ ավելի ցածր հմտություններ պահանջող մասնագիտություններով աշխատողների համեմատ:

Պատկեր 56:

Մասնակցությունը հեռավար ուսուցմանը/ուսումնառությանը

«Հայաստանում ԿՈՎԻԴ-19-ի բռնկումից հետո մասնակցե՞լ եք արդյոք որևէ տիպի հեռավար դասերի/դասընթացների» (n=2440)



Այն հարցին, թե ինչու են որոշել մասնակցել առցանց ուսուցումների, մեծամասնությունը (65%) նշել է, որ տվյալ ծրագիրը/դասընթացը նախկինում պլանավորված է եղել որպես դեմ առ դեմ, սակայն համավարակի պատճառով տեղափոխվել է առցանց հարթակ: Առցանց ուսումնառությանը մասնակցելու երկրորդ ամենատարածված պատճառը ազատ ժամանակ ունենալն է (22%): Հարցվողների մի փոքր խումբ էլ (13%) նշել է, որ ծրագիրը/դասընթացը նախապես պլանավորված է եղել առցանց հարթակում և իրականացվել է ըստ պլանի:

Պատկեր 57:

Հեռավար դասընթացներին մասնակցելու պատճառները

«Ինչպե՞ս պատահեց, որ մասնակցեցիք այդ առցանց դասին/դասընթացին» (n=306)



Հեռավար կրթության ամենատարածված երեք տեսակների շարքում են ֆորմալ կրթության ծրագրերը, այն է՝ դպրոց կամ համալսարան (58%), ոչ ֆորմալ կրթություն, այն է՝ դասընթացներ, աշխատարաններ, կրկնուսույցի պարապմունքներ կամ սեմինարներ (39%), ինչպես նաև ֆորմալ կրթության այլ տեսակներ, այն է՝ քոլեջ, տեխնիկական կամ մասնագիտական դասընթացներ (10%):

Պատկեր 58:

Ներգրավվածությունը հեռավար ուսումնառությամբ կրթական ծրագրերում

«Հեռավար կրթության ինչպիսի՞ դասերի/դասընթացների եք մասնակցել» (n=306)



Ավելի մեծ թվով տղամարդիկ (68%) քան կանայք (52%) են ներգրավված եղել ֆորմալ կրթության մեջ (դպրոց կամ համալսարան), սակայն ոչ ֆորմալ կրթությանը՝ դասընթացներում և աշխատարաններում ավելի մեծ է եղել կանանց ներգրավվածությունը (համապատասխանաբար 47% և 26%):

Պատկեր 59:

Ներգրավվածությունը հեռավար ուսումնառությամբ կրթական ծրագրերի ըստ սեռի

«Հեռավար կրթության ինչպիսի՞ դասերի/դասընթացների եք մասնակցել» (n=306)



Ըստ հեռավար ուսումնառության մասնակցող հարցողների՝ իրենք հիմնականում մասնակցել են ուսուցչի կողմից վարած ուսումնական գործունեության, այն է՝ առաջադրանքների կատարում (66%) և մասնակցություն վիրտուալ դասերի (60%): Հեռուստատեսությամբ կամ ռադիոյով հեռարձակվող ուսումնական նյութը դիտելը կամ լսելը՝ որպես հեռավար ուսումնառության տեսակ, եղել է ամենաքիչ տարածվածը:

Պատկեր 60:

Հեռավար ուսումնառության այն տեսակները, որոնց ներգրավվել են հարցվողները

«Հետևյալ կրթական կամ ուսումնական գործողություններից, եթե այդպիսիք առկա են, որո՞նք եք իրականացրել/ հաճախել/մասնակցել հեռավար կերպով» (n=306)



Ինչ վերաբերում է հեռավար կրթության առավելություններին, ապա առավել հաճախ նշվածների թվում են. ժամանակի խնայողությունը ուսումնական հաստատություն ֆիզիկապես չհաճախելու հաշվին (51%), ճանապարհածախսի խնայողությունը (41%), ինչպես նաև ընտանեկան և աշխատանքային պարտականությունների համադրումը (19%): Առավել քիչ են նշվել հետևյալ առավելությունները. ուսումնական նյութերի հասանելիությունը (11%) և ավելի հեշտ կենտրոնանալը (6%): Բնակավայրով պայմանավորված բավականին տարբերություններ են նկատվել հեռավար կրթության առավելությունների մասին ընկալումներում: Գյուղական և քաղաքային բնակավայրերից հարցվողները մայրաքաղաքում բնակվողների համեմատ ավելի շատ են նշել ճանապարհածախսը խնայելու (45% գյուղական, 49% քաղաքային, 32% մայրաքաղաք), տան վարձը խնայելու (13% գյուղական, 20% քաղաքային, 6% մայրաքաղաք) և ընտանեկան ու աշխատանքային պարտականությունները համատեղելու (18% գյուղական, 29% քաղաքային, 12% մայրաքաղաք) մասին որպես առավելություն: Ուսումնական հաստատություն ֆիզիկապես չգնալու արդյունքում ժամանակ խնայելու մասին ավելի շատ են նշել գյուղական բնակավայրերի հարցվողները (59%)՝ քաղաքային բնակավայրերի (49%) կամ մայրաքաղաքի (48%) համեմատ: Գյուղական բնակավայրերում առավել ցածր է եղել որպես առավելություն իրենց համար հարմար ընթացքով սովորելը նշելու հավանականությունը (4%)՝ քաղաքային բնակավայրերի (18%) կամ մայրաքաղաքի (12%) համեմատ:

Պատկեր 61:

Հեռավար ուսումնառության առավելությունները

«Որո՞նք են ըստ Ձեզ հեռավար ուսումնառության առավելությունները լսարանայինի համեմատ» (բազմակի պատասխաններով հարց, n=306)



Ինչ վերաբերում է թերություններին, ապա հարցվողներն առավել հաճախ նշել են դասավանդողի հետ փոխհարաբերվելու դժարությունները (48%), կենտրոնանալու դժվարությունը (45%), ինչպես նաև գործնական աշխատանքների անհնարությունը (35%): Առավել քիչ նշված թերությունների շարքում են աշխատանքային տարածքի պակասը (4%), առողջական խնդիրները (6%) և տեխնիկական հմտությունների (17%) և սարքավորումների (17%) պակասը: Գյուղական բնակավայրերում ավելի հաճախ է նշվել տեխնիկական հմտությունների (27%) և սարքավորումների (29%) պակասը՝ մայրաքաղաքի և քաղաքային բնակավայրերի համեմատ: Համացանցի հասանելիությունը նույնպես առավել զգալի է գյուղական (27%) և քաղաքային բնակավայրերում (27%)՝ մայրաքաղաքի (19%) համեմատ: Զարմանալիորեն, մինչ 44 տարեկան հարցվողները ավելի հաճախ են նշել հեռավար ուսումնառության ընթացում կենտրոնանալու դժվարության մասին քան 45-64 տարեկանները:

Պատկեր 62:

Հեռավար ուսումնառության թերությունները

«Որո՞նք են ըստ Ձեզ հեռավար ուսումնառության թերությունները լսարանայինի համեմատ» (բազմակի պատասխաններով հարց, n=306)



Ընդհանուր առմամբ, հարցվողների շուրջ երեք չորրորդը (74%) բավարարված է եղել իրենց առցանց պարապմունքների որակով, մինչդեռ 26%-ը բավարարված չի եղել, իսկ դրանցից 12%-ը շատ դժգոհ է եղել: Գյուղական բնակավայրերում առցանց կրթության որակն անբավարար համարողների թիվը ավելի մեծ է եղել (27%) քան քաղաքային բնակավայրերում (12%) և մայրաքաղաքում (9%):

Պատկեր 63:

Հեռավար ուսումնառությունից բավարարվածությունը

«Որքանո՞վ եք բավարարված Ձեր մասնակցած առցանց կրթության որակից» (բազմակի պատասխաններով հարց, n=306)



Ընդհանուր առմամբ, հարցվողներն ավելի բավարարված են եղել առցանց ոչ ֆորմալ կրթության որակով՝ առցանց ֆորմալ կրթության որակի համեմատ:

Պատկեր 64:

Բավարարվածությունը հեռավար ուսումնառությունից՝ ըստ կրթական գործունության տեսակի

«Որքանո՞վ եք բավարարված Ձեր մասնակցած առցանց կրթության որակից» (բազմակի պատասխաններով հարց, n=306)



ԿՈՎԻԴ-19-ի ընթացքում հեռավար ուսումնառության արդյունքների ամփոփում

ԿՈՎԻԴ-19-ի համաճարակի բռնկումից հետո հարցվողների միայն 12%-ն է մասնակցել հեռավար ուսումնառության: Դրանց թվում ավելի շատ են եղել մայրաքաղաքի բնակիչները և ավելի քիչ գյուղաբնակները: Շուրջ մեկ երրորդը (65%) մասնակցել է հեռավար ուսումնառությանը այն պատճառով, որ սովորաբար դեմ առ դեմ անցկացվող ծրագրերը տեղափոխվել են առցանց ձևաչափ: Տղամարդիկ ավելի շատ են ներգրավված եղել ֆորմալ առցանց կրթության մեջ (դպրոց, համալսարան) քան կանայք (համապատասխանաբար 68% և 52%): Իրենց հերթին, կանայք ավելի շատ են ներգրավված եղել հեռավար ոչ ֆորմալ դասընթացների կամ աշխատարանների (համապատասխանաբար 47% և 26%): Հեռավար կրթության որոշ առավելություններն են ժամանակի խնայողությունը ֆիզիկապես ուսումնական հաստատություն չգնալու արդյունքում (51%), ճանապարհածախսի խնայողությունը (41%), ինչպես նաև աշխատանքային և ընտանեկան պարտականությունների համատեղումը (19%): Թերություններ թվում նշվել է դասավանդողի հետ փոխհարաբերվելը (48%), կենտրոնանալու դժվարությունը (45%), ինչպես նաև գործնական աշխատանքների անհնարությունը (35%): Հարցվողներ մեծամասնությունը (74%) բավարարված են եղել առցանց պարապմունքների որակով: Ընդհանուր առմամբ, հարցվողներն ավելի բավարարված են եղել առցանց ոչ ֆորմալ կրթության որակով՝ առցանց ֆորմալ կրթության որակի համեմատ:

Եզրակացություններ

Մեծահասակների կրթության (ՄԿ) այս հետազոտությունը առաջինն է Հայաստանում, քանի որ նախկինում արված հետազոտություններից և ոչ մեկը հատուկ չի անդրադարձել մեծահասակների կրթության խնդիրներին և ընկալումներին: Հետազոտության արդյունքները կարևոր են ոչ միայն Հայաստանում ՄԿ աջակցության և ջատագովության տեսանկյունից, այլև կարող են հանդես գալ որպես հետագա հետազոտությունների հիմք և ելակետ: Հետազոտությունը կարող է ներառվել ՀՀ Ազգային վիճակագրական կոմիտեի կողմից իրականացվող աշխատանքներում:

Մեծահասակների ուսումնառության հիմքում ընկած են տարբեր պատճառներ, այդ թվում՝ անձնական աճը, աշխատանքի հեռանկարների բարելավումը, նոր հմտությունների ձեռք բերումը: Հայաստանի դեպքում, հարցվողների միայն փոքր տոկոսն է (16%) տեղեկատվություն փնտրել ՄԿ հնարավորությունների մասին: Նման վիճակագրությունից կարելի է ենթադրել, որ մեծահասակների շրջանում ընդհանուր առմամբ առկա է կրթական ծրագրերին մասնակցելու դժկամություն: Հարկ է նշել, որ ՄԿ հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվություն փնտրողների մեջ առավել ակտիվ են եղել կանայք, երիտասարդները, մայրաքաղաքի բնակիչները և բարձրագույն կրթություն ունեցողները: Ժողովրդագրական նման միտումները հատկանշական են եղել նաև հետազոտության այլ արդյունքների մասով:

Հարցվողների մեծամասնությունը (75%) նախորդող 12 ամսվա ընթացքում ներգրավված է եղել ինֆորմալ կրթությանը, սակայն միայն 14%-է մասնակցել ոչ ֆորմալ կրթական ծրագրերի, իսկ ֆորմալ ծրագրերի մասնակցել է հարցվողների ավելի քիչ մասը, այն է՝ 8%: Ինչպես և ՄԿ հնարավորությունների վերաբերյալ տեղեկատվություն փնտրողների դեպքում, կանայք, երիտասարդները, մայրաքաղաքի բնակիչները և բարձրագույն կրթություն ունեցողները առավել ակտիվ են մասնակցել ինֆորմալ և ոչ ֆորմալ կրթությանը: Հարցվողների մեծամասնության համար ֆորմալ կրթությունը համարվել է ուսումնառության նախընտրելի մեթոդը: Ոչ ֆորմալ կրթությունը դիտարկվել է որպես ամենաարդյունավետ մեթոդ գործնական հմտություններ ձևավորելու (49%), ինչպես նաև մարդկանց հետ հանդիպելու, մասնագիտական ցանցերը ընդլայնելու համար (44%):

Հարցվողները աննշան մեծամասնությամբ (57%) չեն կարծում, որ սովորելը ավելի դժվարանում է 30-ից հետո: Կանայք և բուհական կրթություն ունեցողները ավելի հակված են համաձայնելու այս պնդման հետ: Այդուհանդերձ, հարցվողների մեծամասնությունը կարծում է, որ մինչև 30 տարեկան մարդիկ ավելի հետաքրքրված են սովորելով, որ նոր հմտություններ սովորելը նրանց համար ավելի հեշտ է, և որ 30-ից բարձր տարիք ունեցողները չափազանց շատ պարտականություններ ունեն, որպեսզի կարողանան շարունակել իրենց կրթությունը: Նման վիճակագրությունից հետևում է, որ չնայած շատերը չեն կարծում, թե մեծահասակները բախվում են զգալի դժվարությունների կրթությունը շարունակելիս, ամեն դեպքում 30-ից երիտասարդները, ըստ հարցվողների, ուսումնառության հարցում առավելություններ ունեն 30-ից մեծերի նկատմամբ և որ դա ազդում է վերջիններիս կրթությունը շարունակելու մոտիվացիայի վրա: Բացի այդ, հարցվողների մեծամասնությունը հաստատել է այն համոզմունքը, որ կրթությունն ազատ ժամանակ ունեցողների համար է, որից կարելի է հետևություն անել, թե ժամանակը կրթական հնարավորությունները խոչընդոտող կարևոր գործոն է:

Եվրոպական հանձնաժողովի մեծահասակների կրթության օրակարգի կետերից շատերը կարող են կիրառելի լինել հայաստանյան համատեքստում: Իրականացման ենթակա առաջնային կետերի շարքում կարող են լինել մեծահասակ ուսումնառուների իրազեկման, ուղղորդման և մոտիվացիայի արդյունավետ մոտեցումները: Սա կարող է խրախուսել մեծահասակների կրթությունը՝ հաշվի առնելով, որ շատերի կարծիքով կրթությունն ավելի հեշտությամբ է տրվում մինչև 30 տարեկան մարդկանց և նրանց, ովքեր ունեն ազատ ժամանակ: Հետազոտության արդյունքներից կարելի է նաև եզրակացնել, որ ՄԿ-ի նկատմամբ հետաքրքրությունն ավելի բարձր է կանանց, երիտասարդների, բարձրագույն կրթություն ունեցողների և մայրաքաղաքի բնակիչների շրջանում: ՄԿ աջակցությանն ու մոտիվացիայի բարձացմանն ուղղված ցանկացած հետագա նախաձեռնություններ պետք է հաշվի առնեն այս հանգամանքը՝ փորձելով թիրախավորել ՄԿ-ով պակաս հետաքրքրված խմբերին:

Կրթական հնարավորություններ տրամադրողները պետք է ավելի ճկուն լինեն և բարելավեն հասանելիությունը, քանի որ հարցվողներից շատերը կարող են ներգրավվել մեծահասակների կրթությանը միայն աշխատանքային ժամերի ընթացքում: Եվրոպական կրթական հիմնադրամի «Հայաստան 2020. Կրթության, վերապատրաստումների և զբաղվածության զարգացումներ» զեկույցում նշվում է, որ աշխատանքի վրա հիմնված ուսումնառությունը դարձել կառավարության առաջնահերթություններից մեկը: Մեծահասակների կրթությունը կարող է ինտեգրվել այս համատեքստում՝ այդպիսով բարելավելով մեծահասակ ուսումնառուների համար կրթական հնարավորությունները: